Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24991

…ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՀԱՄ. ԱՐՀՄԻՈՒԹ. ԽՈՐՀՐԴԻ V ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

331.881
Հ-21

…ՈՄԱ 1931 ԹԻՖԼԻՍ

331.881
Հ-21
05 JAN 2010

ՎՐԱՍՏԱՆԻ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ЦЕНТР. ГОСКНИГОПАЛАТА Т.С.С.Р.
№ 1130 2
331.881(47С)

# ՀԱՄ. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ V-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԸՆԿ. ՇՎԵՐՆԻԿԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

ՇՐՈՄԱ 1931 ԹԻՖԼԻՍ

24991

01 JUN 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. Մ. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

42647-63

Տպ. Ա. Յ. Մյասնիկյանի անվ., հրատ. „Զարյա Վոստոկա"-ի, Թիֆլ. 33

Պատվեր 706. Գլավլիտ 365, Քանակ 1000.

# ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 5-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԸՆԿ. ՇՎԵՐՆԻԿԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Համկոմկուսի 16-րդ համագումարը կուսակցության և ՀԱՄԿԽ-ի առաջ դնում է յերեսը դեպի արտադրություն դարձնելու հարցի շարունակման և իրագործման խնդիրը: Արհմիությունները ՀԱՄԿԽ-ի ղեկավարության տակ սոցիալիստական շինարարության, սոցիալիստական մրցման և հարվածայնության գործում բանվորական լայն մասսաներին ներգրավելում վերջին շրջանում ունեցել են զգալի աջողություն:

Սակայն սոցմրցման և հարվածայնության աճման ու ծավալման նոր ձևն արհմիություններից պահանջում է ավելի կոնկրետ ղեկավարություն բանվոր մասսաների արտադրողական ակտիվության, այլ և ավելի ակտիվ մասնակցություն պետական, պլանային և տնտեսական հիմնարկների գործերում:

Գործազրկության վերացումը և գործարաններում բանվորական լայն շերտերի նոր ու խոշոր հոսանքն արհեստակցական միությունների առաջ հարց են դնում բանվորական նոր կադրերը ներգրավելու և արհմիություններում դասակարգային դաստիարակություն տալու վերաբերյալ այնպես, ինչպես «կոմմունիզմի դպրոցում»:

Արհմիությունների առաջ դրված խոշորագույն խնդրի լուծումը սոցիալիստական շինարարության ծավալման շրջանում, մանավանդ հնգամյակի վճռողական երրորդ տարում պահանջում է արհմիությունների արտադրողական գործունեության վերջին ծայր ուժեղացում և ամենօրյա հսկողություն բանվորների տնտեսական և կրթա-կենցաղային դրության բարելավման գործում։

## Կազմակերպչական խնդիրներ

1. Գոյություն ունեցող արհմիությունների ստրուկտուրան, որ արդյունաբերության և ժողովրդական տնտեսության զանազան խավերից բանվորական խոշորագույն մասսաներ է միացնում (մետաղագործների միությունը— 1.480.000, կառուցողների միությունը — 1.300.000, գյուղատնտ. միությունը— 1.500.000 և այլն), այլև խոշոր քանակության տնտեսական միությունների հետ կապված լինելը դժվարացնում է արհմիություններին կոնկրետ մասնակցություն ու ղեկավարություն ունենալ սոցիալիստական արդյունաբերության և ժողովրդական այլ տեսակի տնտեսությունների վրա. արտադրական կոնկրետ հարցերի շուրջն ակտիվության չարունակ զարգացող բանվորության կազմակերպման վրա, ավելի ճշգրիտ հաշվառում արտադրող և արդյունաբերող բանվորների առանձին խմբակների կենցաղային առանձին հատկությունների վերաբերյալ. ունենալ ավելի լավ հոգացողություն և պայքարել բյուրոկրատիզմի դեմ։

Նկատի առնելով այս բոլորը ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումն արտադրողականության սկզբունքի հիման վրա



անհրաժեշտ է համարում արհմիությունների կազմը ենթարկել փոփոխման, առաջ բերելով նրանցից նոր միություններ։

Այդ որոշման համաձայն կազմակերպել հետևյալ միությունները.

Մետաղագործների միությունից.

1) Մետալուրգիական արդյունաբերության բանվորության միություն։

2) Տրանսպորտա-մեքենագործ բանվորների միություն։

3) Գյուղատնտեսական մեքենագործ բանվորների միություն։

4) Ելեկտրոտեխնիկական արդյունաբերության և ելեկտրոկայանի բանվորների միություն։

5) Ավտոտրակտորային և ավիացիոն արդյունաբերության բանվորների միություն։

6) Մեքենագործային արդյունաբերության բանվորների միություն։

7) Գունավոր մետաղ և ոսկի հանող բանվորները, որոնք գտնվում են լեռնային միությունում և մետաղագործների միությունում գտնվող բանվորների, որոնք մշակում են այդ մետաղները, միացնել մի միությունում, որը կոչվում է. գունավոր մետաղներ ձեռք բերող և մշակող բանվորների միություն։

## Լեռնա-հանքափորների միությունից

1) Լեռնա-հանքային արդյունաբերության բանվորների միություն։

2) Ածխային արդյունաբերության բանվորների միություն։

3) *Նավթային արդյունաբերության բանվորների միություն։*

4) *Սլանց-տորֆային արդյունաբերության բանվորների միություն։*

Քիմիկոսների միությունից․

1) *Բամբակի մշակութ․ ջուլհակների միությունից արդյունաբեր․ բանվորների միություն։*

1․ *Հիմնա-քիմիական արդյունաբերության բանվ․ միություն։*

2․ *Ռետինա-քիմիական արդյունաբ․ բանվ․ միություն։*

3․ *Ապակու և ճենապակու արդյունաբ․ բանվ․ միություն։*

Ջուլհակների միությունից․

1. *Բամբակի մշակույթ. արդյունաբ. բանվ. միություն։*
2. *Բրդի աբրեշումի և գուլպաղ. արդյունաբ. բանվ. միություն։*
3. *Կանեփ արդյունաբ. բանվ. միություն։*

Կառուցողների միությունից

1) *Արդյունաբերության, կոմմունալ-բնակարանային կառուցող բանվորների միություն։*

2) *Երկաթուղային, նավակայան․ և ճանապարհային շինարար բանվորների միություն։*

3) *Ցեմենտ-բրուտային արդյունաբերության բանվորների միություն։*



Սննդի միությունից

1) *Ալյուրա-հացի և կանդիտերային արդյունաբերության բանվորների միություն։*

2) *Մսի-ձկնեղենի և յուղահանության արդյունաբերության բանվորների միություն։*

3) *Թեյի, ծխախոտի արդյունաբերության բանվորների միություն։*

4) *Ժողովրդական սննդի բանվորների միություն։*

Գյուղատնտես․ բանվորների միությունից․

1) *Երկրագործական տնտեսության բանվորների միություն։*

2) *Կենդանաբուծության տնտես․ բանվորների միություն։*

3) *Մեքենատրակտոր․ կայանի և բատրակ բանվորների միություն։*

4) *Շաքարի արդյունաբերության բանվորների միություն։*

Կոմմունալ միությունից

1) *Կոմմունալ տնտեսության (տրամվայի և ավտոբուս․ յերթևեկության, գազային գործարանների, ջրանցքի և կոմմունալ․ էլեկտրոկայանների) բանվորների միություն։*

2) *Քաղաքային հիմնարկությունների (բաղանիքների, բնակարանների, տնային ծառայողների, պարիկմախերներ, լվացարարներ, հրդեհաշեջներ և ուրիշ մանր հիմնարկների) բանվորների միություն։*

խորհրդային ծառայողների միությունից

1) Կոոպերատիվների և պետական առևտրական հիմնարկութ. աշխատավորների միություն:

2) Պետական հիմնարկություններում աշխատողների միություն:

3) Ֆինանսային և բանկային աշխատավորների միություն:

Արհմիությունների կազմերը փոփոխության ենթարկելու վերաբերյալ պլենումի կայացրած ներկա որոշման վերաբերյալ միությունների անդամների մեջ և բանվորական լայն մասսայական ժողովներում անել բացատրական զեկուցումներ, միաժամանակ բանվորական մասսաների առաջ վերակազմված միությունների ԿԿ պետք է անցկացնեն հաշվետու կամպանիաներ իրենց ունեցած գործունեության վերաբերյալ: խերո– ցմ ք

Բոլոր միությունների և միջմիությունների համագումարներ հրավիրելու նշանակած ժամանակների փոխման յենթարկելու վերաբերյալ Կենտ. Խորհրդի պլենումի կայացրած որոշումը հաստատել և ընդունել:

1. Անհրաժեշտ համարելով առաջին հերթին թե տեղային և թե վերակազմված միությունների համագումարների հրավիրումը, պլենումը հանձնարարում է պրեզիդիումին, վորպեսզի նա Կենտ. կոմիտեների հետ միասին մշակե միությունների փոփոխման յենթարկելու մասին բոլոր անհրաժեշտ համարվող կազմակերպչական միջոցներ. վորոշել համագումարներ հրավիրելու ձևն ու ժամանակն այն պայմանով, վոր միությունների փոփոխման յենթարկվելու բոլոր գործը վերջացվի ամենակարճ ժամանակում: Հանձնարարել Համ. Արհ. Կենտ. Խորհ. պրեզիդիումին անհապաղորեն անցնել նոր միությունների ԿԿ կազմակերպչական բյուրոներ կազմելու գործին՝ պարտավորեցնելով նրանց անցնել նոր կազմակերպված միությունների համագումարներ հրավիրելու նախապատրաստական աշխատանքներին:

2. Արտադրողական հարցերի վորոշումներին բանվորական լայն մասսաներ գրավելու, այլև նրա լավագույն սպասարկումն ապահովելու նպատակով, միություններում ըստ արդյունաբերության կարևորագույն ճյուղերի կազմակերպել արտադրողական սեկցիաներ, որինակ մեքենաշինական բանվորների միությունից կազմակերպել սեկցիաներ—դազգյահ շինողների, գործիքների, դիզելների, պղինձ–խողովակային ևայլն: Ավտոտրակտ. և ավիաց. արդյունաբեր. բանվ. միությունից ավիասեկց, ավտոսեկցիա և տրակտ. սեկցիա: Տրանսպորտային մեքենաշինարարության բանվորների միությունից— Նավաշինության սեկցիա, շոգե–մեքենաշինության և այլն: Արդյունաբերական և կոմունալ – բնակարանային շինության բանվորների միությանը թույլ տալ ըստ արհեստի կազմակերպել դուրգարների, քարտաշների, մեխանիզատորների և այլ սեկցիաներ:

Հանձնարարել ՀԱՄԿԽ–ի պրեզիդիումին միությունների ԿԿ–երի հետ միասին պարզել յուրաքանչյուր միության սեկցիաների ճշգրիտ քանակն ու բնավորությունն ամեն մակին առանձին վերցրած, նրանց պարտականությունների սահմանն ու հարց բարձրաց–

նել յուրաքանչյուր միությունից առաջիկա համագումարում սեկցիաներ կազմակերպելու մասին: Սեկցիաներ կազմելու հետ միասին գործնականացնել ըստ արհեստի հատուկ ժողովներ և գումարել արտադրողական խորհուրդներ (մետալիչչիկներ, ընկալչչիկներից, մեքենավարներից և այլն). այլև բանվորական ժողովներում ընտրել հատուկ լիազորներ արհեստավորներից: Միությունների վերակազմումը պետք է ապահովեցնի արհմիութ. աշխատանքի ծանրության կենտրոնը հիմնարկությունները, գործարաններն ու կոլեկտիվներ փոխադրելը— մանավանդ ակզբնական արտադրական խմբակներին:

3) Փոփոխել ղեկավար արհկազմակերպությունների գործելակերպն այնպես, որ այդ գործելակերպը շատ ավելի մոտեցնի միություններին և մասնակից անի արտադրողական հարցերի գործնական լուծումներին, լավացնի մասսաներին սպասարկելու գործը և ապահովցնի իր կոնկրետ, դիֆերենցիալ ղեկավարությունը տեղերում և առանձին շրջաններում տար վող աշխատանքներին: Հաստատել հիմնովին պրեզիդիումի մշակած ՀԱՄԿ-ի ստրուկտուրան:

Հանրապետական յերկրային և շրջանային պրոֆմիությունների ստրուկտուրան խստորեն պետք է համապատասխան լինի ՀԱՄԿԽ-ի ստրուկտուրային և պարունակի իր մեջ միությունների մեջ մտնող անդամների քանակը, արդյունաբերության ճյուղերի հատկություն—բնավորությունը, ազգությունների առանձնահատկությունը և այլն:

Կենտ. Կոմիտ. և միությունների տեղային բաժանմունքների ստրուկտուրան պետք է կառուցել գոյություն ունեցող սեկտորների հաշվառման հիման վրա արտադրողական խմբակների և սեկցիաների հետ միասին: Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի պրեզիդիումին քննության առնել ու հաստատել հանրապետական յերկրային և շրջանային պրոֆմիությունների ԿԿ ստրուկտուրան հաշվի առնելով ազգությունների առանձնահատկությունները: Միությունների վերակազմվելը պետք է խստորեն առաջ բերի արհմիությունների ներքին ոչակների ապարատների կրճատում (շրջանների բաժանմունքներ և կազմակերպություններ) կամավոր աշխատանքի ծավալման և արտադրող հարվածայիններին միությունների ապարատների աշխատանքներին մասնակից անելու հիման վրա, միաժամանակ միությունների ԿԿ-ին անմիջապես կապելով հիմնարկությունների հետ:

Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի պրեզիդիումին համապատասխան միությունների ԿԿ-ի հետ միասին վորոշել հանրապետ. և շրջանային միությունների ցանցը յուրաքանչյուր արհմիությունն առանձին վերցրած և խստորեն պարզել նրանց ստրուքտուրան և շտատները: Պետք է ղեկավարվել շրջանային և յերկրային միությունների ոչակների մաքսիմալ կրճատումով ինչպես վերակազմված, այնպես և մյուս միությունների վերաբերյալ առաջին հերթին կոնցենտրացիոն արդյունաբեր և քիչ թվով հիմնարկություններ ունեցող միություններում առանձին ռայոնների ազգային առանձնահատկությունների հաշվառումով:

Ծախքերի կրճատումը պետք է տարածվի ինչպես վերակազմված, այնպես և մյուս միությունների վրա: Նոր կազմակերպված ռայոնային պրոֆխորհուրդնե-

րում (Մոսկվա, Լենինգրադ) ընդունել աշխատավորների կազմ յերեք հոգուց վոչ ավելի:

Միությունների փոփոխման յենթարկվելու հետևանքով անհրաժեշտ է ամրացնել շրջանային պրոֆխորհուրդները, բարելավել ղեկավարությունը և բարձրագույն միջպրոֆմիությունների կողմից ուժեղացնել աշխատող կազմը:

Համարել անթույլատրելի ֆաբզործկոմների կողմից օրենքով ընդունված և հավաքական պայմանագրով հաստատված վճարներից դուրս հիմնարկություններին պահանջ ներկայացնելը պրոֆաշխատողներին առանձին վորձ տալու նպատակով:

Առաջարկել նախագահությանը և միությունների ԿԿ-րին վճռականորեն կրճատել միջմիությունների և արհմիությունների վճարովի ապարատների ծախքերը և այդ հաշվից ավելացնել արհմիութ. անդամների կրթա-կենցաղային կարիքների վրա արվող ծախքերը:

Պրոֆխորհուրդները, շրջանային բաժանմունքները և միությունների ԿԿ-ները պետք է սաստիկ հսկողություն նշանակեն արհմիությունների գումարների, այլ և ֆաբզործկոմների միջոցների նպատակահարմար կերպով ծախսելու վրա:

Սաստկապես արգելել բոլոր արհմիություններին և տեղկոմներին առանց բարձրագույն օրգանների թույլտվության, ծախսել վորևե գումար վոր չի մտած նախահաշվի մեջ:

Հանձնարարել նախագահությանը մշակել կոնկրետ միջոցներ, վորոնք սահմանափակ են միությունների ու միջմիությունների ֆունկցիաները (իրավունքները), այլ և պարզաբանեն նրանց պատասխանատվու-



թյունը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել, թե ինչպես են կիրառվում կուսակցության և արհմիութ. բարձր օրգանների դիրեկտիվները:

5. Գործարաններում պրոմֆինպլան կազմելու, նրա նախաձեռնության լայնացման ու ընդարձակման գործի լավացման այլև արհմիությունների այդ և ժողովրդական տնտեսության պլան կազմելու գործի վրա ունեցած մասնակցության վորակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտորեն ներգրավել բոլոր ղեկավար արհմիությունների (ՀԱՄԿԽ, ԿԿ, հանրապետ. և շրջան. պրոֆխորհուրդներ) համապատասխան գիտական պատրաստություն ունեցող վորակյալ աշխատավորների կադրեր՝ մասնավորապես յերիտասարդության շարքերից: ՀԱՄԿԽ-ի պլենումը հանձնարարում է նախագահությանը այս տարի բարձրագույն դպրոցների շրջանավարտներից ընտրել հարյուր հոգի և ուղարկել աշխատելու ՀԱՄԿԽ, արհմիութ. ԿԿ շրջանային պրոֆխորհուրդները: Սրա հետ միասին պլենումը պարտավորեցնում է բոլոր հանրապետ., յերկրային և շրջանային պրոֆխորհուրդներին այս ուղղությամբ տեղերում ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ: Յելնելով այն բանից, վոր պրոֆկադրեր պատրաստելը ներկա մոմենտում ստանում է գերագույն նշանակություն, պլենումն անհրաժեշտ է համարում լայնացնել այդ կուրսերի և դպրոցների ցանցը, ուժեղացնել ՀԱՄԿԽ-ի կադրեր պատրաստելու ցանցի վրա ունեցած նախաձեռնությունը, հատուկ ուշադրություն դարձնելով դպրոցների ծրագրերի վորակի լավացման, դասատուների ընդունակության և կուրսանտների ընտրողության ու շրջանավարտներին աշխատանքի ուղարկելու վրա: Գր-

ընումն անհրաժեշտ է համարում գոյություն ունեցող պրոֆկուրսերից շուտով ունենալ ավարտողների խումբ այնմ տքով, վոր առաջին հերթին այդ կադրերն օգտագործվեն ազգային հանրապետությունների արհմիությունների խոշորագույն հիմնարկությունների աշխատանքներն ուժեղացնելու և ժողովրդական տնտեսության խոշորագույն ճյուղերում աշխատելու գծով: Պլենումն ընդգծելով անհրաժեշտ է համարում բոլոր միությունների կողմից ապահովել ստորին նոր ակտիվին մշտական օգնություն հասցնելու գործը նրա աշխատանքներում, գտնելով դրա մեջ նոր պրոֆկադրեր պատրաստելու լավագույն միջոց:

Պրոֆշարժման և աշխատանքի հարցերի համար պլենումն անհրաժեշտ է գտնում կազմակերպել կարմիր պրոֆեսորն. ինստիտուտի հատուկ բաժանմունք: Պլենումը հանձնարարում է նախագահությանը հավաքել կուրսանտների կադր նրանցից, վորոնք ակտիվ մասնակցություն են ունեցել պրոֆշարժման մեջ և աշխատել են աշխատանքի կոմիսարիատի հիմնարկներում և նրանցից, վորոնք գիտնականորեն ուսումնասիրել են պրոֆշարժման և աշխատանքի հարցերը: Կարմ. պր. ինստ. բաժանմունքի այդ լսողները պետք է միացնեն ուսումնագիտական աշխատանքը կարմ. պր. ինստիտուտին և վորպես պրակտիկանտներ պատշաճ միությունների միջոցով մասնակցեն գործնական աշխատանքներին:

### Բանվորների նյութական կենցաղային սպասարկման մասին սոցապահովագրության տեսակետից

Սոցիալիստական տնտեսության հսկայական աճը և ապահովագրության պատշաճ ֆոնդերի աճումը վերջին տարիներում (1925—26 թ.՝ 722 միլ., 1926—27 թ. 873 միլ., 1927—28 թ.՝ 980 միլ., 1928—29 թ.՝ 1175 1929—30 թ.՝ 1544, 1931 թ.՝ 2138 միլ., հնգամյակի վերջին տարում նշանակված է դեմ 2136 միլ.) պահանջում են սոցապի գործի ամբողջ ցանցի լավացումը վերևից մինչև ներքև, նրա գործի վերաշինումը, նրա սերտ կապն ու մոտեցումը գործարաններին, ֆաբրիկաներին և խոշոր կոլխոզներին, սոցապահովագրության աշխատող կադրերի լավացումն ու հիմնովին արմատախիլ անելը նրա գործող ապարատից բյուրոկրատներին: Պրոլետարիատի պետության որգանը հանդիսացող կենտր. ապահովագրական հսկայական ֆոնդերը պահանջում են նրա ամենօրյա աշխատանքների մեջ աշխատանք. կոմիսարիատի և պրոֆմիությունների կազմակերպությունների կողմից նախաձեռնության վճռական ուժեղացում վերից ներքև:

Ապահովագրական որգանների աշխատանքների արտադրության կոնկրետ պայմաններին մոտեցնելու նպատակով, ապահովագրության բոլոր տեսակները լավացնել բանվորության համար և աշխատանքի մեջ նկատվող վոլոկիտայի վերացման նկատումով ՀԱՄԿԽ անհրաժեշտ է համարում:

1) Խոշոր և միջակ արդյունաբեր հիմնարկություններում և տրանսպորտում հիմնել ապահովագրության դրամվճար կետեր՝ իրավունք վերապահելով ֆաբգործկոմներին հսկողություն ունենալու նրանց աշխատանքների վրա: Դրամվճար կետերին նախահաշվով տրված և տնտեսված չծախսված գումարի հիսուն տոկոսը մնում է հիմնարկության մեջ բանվորների և մանա-

վանդ հարվածայինների կրթա-կենցաղային կարիքների համար ծախսելու, վորպես լրացուցիչ օգնություն:

Պլենումը հանձնարարում է նախագահությանը աշխատ. կոմիսարիատի և կենտր. ապահովագրութ. հետ միասին յերկու դեկադի ժամանակամիջոցում այս վորոշման համաձայն կանոնադրություն մշակել դրամվճար կետերի համար:

2) Շրջանային և քաղաքային դրամարկղների կոմիտետները ընտրվում են շրջանային և քաղաքային միջմիությունների կոնֆերենցիաներում՝ շրջանային և քաղաքային պրոֆխորհուրդների ղեկավարությամբ՝ սոցապահովագրական օրգանների կողմից հրատարակված օրենքների և դիրեկտիվների համաձայն: Շրջանային և ընդհանուր քաղաքային դրամարկղները միացնում են այն հիմնարկություններին, վորոնք չունեն դրամվճար կետեր:

3) Շրջանային, յերկրային, հանրապետական դրամարկղները ընտրվում են շրջան., յերկրային և հանրապետ. միջմիությունների համագումարներում:

Շրջան., յերկր. և հանրապ. սոցօրգաններն իրենց աշխատանքները վարում են միջմիութ. և սոցապահովագրային օրգանների կողմից հաստատված նախահաշվով:

Սոցապահովագրով հիմնարկության բյուջեն և դըրամական միջոցների կարգավորումը շրջանների, հանրապետությունների ու արդյունաբերության ճյուղերի համար քննվում են ՀԱՄԿԽ-ի ու աշխատանքի կոմիսարիատի կողմից և հաստատվում են Միության ժողկոմխորհի կողմից:



4694-63

4) Նպատակահարմար համարել Սոցապի ֆինանսա-տնտեսական գոյություն ունեցող օրենքի մեջ մըտցընել հետևյալ ձևի փոփոխությունը. Սոցապի կենտ. դրամարկղի հետ միասին, վոր ընդգրկում է արդյունաբերական բոլոր ճյուղերի նախահաշիվները, ծանր արդյունաբերության հիմնական ճյուղերում (ածուխ, մետալուրգիա, մեքենակառուց., հանք, հիմնական քիմիա) և յերկաթուղային տրանսպորտում հատուկ ֆոնդերով ապահովելով այդ դասակարգերին, հիմնել կենտրոնացված և կենտսոցապին յենթակա սոցապային հատուկ դրամարկղներ: Արդյունաբերության մնացող մյուս ճյուղերի համար այս դեպքում մնում է ներկայիս գոյություն ունեցող դրությունը:

Պլենումը հանձնարարում է նախագահությանը կենտսոցապի և աշխկոմի հետ միասին մի ամսվա ընթացքում մշակել այդ հարցը՝

5) Արհմիության անդամներին խրախուսելու և պրոլետարիատի հիմնական կադրերին լավագույն ապահովացման (շախտերին, մետաղ. բանվորներին, յերկաթուղ. մեքենավարներին և այլն) նպատակով, այլև բանվոր ույժերի վոչ մշտակայունության (текучесть), մեկից մյուս տեղ փոխվողների և սիմուլյանտների դեմ կռիվ մղելու նպատակով, վորոնք լուծարք են առաջ բերում սոցշինարարության և արտադրության գործում, անհրաժեշտ համարել հետևյալ ձևը ընդունել նրանց վճարների համար.

ա) Միության այն անդամները, վորոնք ներկա հիմնարկության մեջ աշխատել են յերկու տարուց ավելի և յերեք տարուց ավելի յել արտադրության մեջ,

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍՌ Арм. ССР им. А. Мясникяна

հիվանդության բոլոր ժամանակ ստանում են ամբողջ ռոճիկը։

բ) Միության անդամները, վորոնք յերկու տարուց ավելի աշխատել են ներկա հիմնարկությունում, այլև հանքափորներն ու կառուցողները (վոր աշխատել են ամբողջ տարի) ներկա հիմնարկությունում մեկից մինչև յերկու տարվա ստաժով, ստանում են առաջին քսան որվա համար աշխատավարձի յերեք չորրորդ մասը, իսկ մնացող որերինը ամբողջ ռոճիկը։

գ) Միության անդամները, վոր ներկա հիմնարկությունում աշխատել են յերկու տարուց ավելի, իսկ հանքային բանվորները և կառուցողները (ամբողջ տարվա աշխատանք) մեկ տարվա ստաժով ներկա հիմնարկությունում, ստանում են յերկու յերրորդ աշխատավարձը առաջին քսան որվա համար, իսկ հիվանդության մնացող որերինը ամբողջապես։

դ) Ներկա հիմնարկությունում մի տարուց պակաս աշխատած միության անդամներն ստանում են աշխատավարձի յերկու յերրորդ մասը հիվանդության բոլոր ժամանակ։

ե) Միության վոչ անդամներն առաջին ամսվա համար ստանում են կես աշխատավարձը, իսկ մնացող ժամանակ յերկու յերրորդ մասը։

զ) Բանվորները և ինժեներներն ու տեխնիկ հարվածայինները մի տարուց վոչ պակաս ստաժով, վորոնք հիմնարկության մեջ թեև աշխատած լինեն մի տարուց պակաս, բայց արտադրության մեջ աչքի լինեն ընկնելիս ու սոցիալ կոնտրակտացիայի գծով 2—3 տարով կապված լինեն հիմնարկության հետ և գործկոմի ու վարչության կողմից ճանաչված վորպես հարվածայիններ, հիվանդության ժամանակ ստանում են ամբողջ աշխատավարձը։

Սիմուլյացիայի, մնասարարների և վոչ կայուն բանվոր ուժերի դեմ մղված կռվի հետևանքով տնտեսված գումարը ծախսել բանվորների սոցկենցաղային պայմանները լավացնելու գործի վրա (հանգստի տըներ, սանատորիաներ և այլն)։

6. Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի նախագահությանը միությունների ԿԿ-ների հետ միասին մշակել այն հարցը, թե ինչպես պարզորոշ են այն աշխատավորների ստաժը, վորոնք տնտեսական և պետական որգանների կողմից մեկտեղից փոխադրվում են մյուս հիմնարկությունները, նույնը յերիտասարդների և կառուցող բանվորների վերաբերմամբ։

7. Պլենումն անհրաժեշտ է համարում միության անդամների համար սահմանել հետևյալ արտոնությունները․

ա) Հանգստի տներում, սանատորիաներում, դիսպանսերներ և յերիտասարդների համար գոյություն ունեցող կալոնիաներ ուղարկել առաջին հերթին միության անդամներին, վորոնք հիմնարկությունում աշխատել են յերկու տարուց վոչ պակաս։

բ) Սոցապի հաշվին գոյություն ունեցող պիոներական լագերում, յերեխայական այգիներում և մսուրներում առաջին հերթին ընդունվում են միության անդամների յերեխաները։

8. Պլենումը հանձնարարում է նախագահությանը վերաքննել հաշմանդամության և ծերության համար տրվող պենսիաների գործնական ձևը, այն իմաստով, վոր հիմնովին փոխվի դեպի լավը առաջին հերթին նը-

կատի առնելով ծանր, վնասակար և կարևոր արտադրության մեջ աշխատողներին (հանքափորներ, ձուլողներ և այլն):

9. Պլենումն առաջարկում է բոլոր պրոֆկազմակերպություններին Սոցապի օրգանների վերաշինության և սոցապահովագրության բարելավման գործում ապահովել պրոֆանդամ մասսաների ակտիվությունը: Պլենումն անհրաժեշտ է համարում ներկա վորոշումները կիրառելու նպատակով լայն բացատրական ժողովներ գումարել բոլոր հիմնարկություններում: Պլենումը առանձնապես դարձնում է բոլոր պրոֆկազմակերպությունների ուշադրությունն այն բանի վրա, վոր նրանք սաստիկ ստուգման յենթարկեն Սոցապի աշխատավորների ամբողջ կազմը, նրա շարքերը դասակարգորեն խորթ տարրերից, բյուրոկրատներից և օպորտյունիստներից մաքրելու նպատակով: Սրա հետ միասին պրոֆօրգանները պետք է առաջ մղեն Սոցապում աշխատելու պրոֆմիություններից լավագույն ակտիվիստների և արտադրություններից հարվածայինների:

Հանձնարարել նախագահությանը Առժողկոմի հետ միասին միջոցներ մշակել արդյունաբերության ճյուղերում աշխատող բանվորներին տրվող բժշկական օգնությունը լավացնելու գծով:

փոխադարձ օգնության դրամարկղների մասին

1. Սոցապի հաստատած օրենքով սահմանված օգնությունից բացի, պրոֆմիության անդամ բանվորներին կարիք ունեցած դեպքում օգնություն հասցնելու նպատակով հանձնարարել նախագահությանը և միությունների ԿԿ-ներին մի ամսվա ընթացքում արդյու-



բերական հիմնական ճյուղերի խոշոր և միջակ հիմնարկություններում (ածուխ, մետաղ, հանք, հիմնական քիմիա և յերկաթուղային տրանսպորտ) պրոֆմիություններից և պետությունից սուպսիդիա տրվող նոր տիպի փոխադարձ օգնության դրամարկղներ:

2. Դրամարկղների սուբսիդիաները կազմվում են սոցապի և պրոֆմիությունների տարեկան վճարներից: 1931 թ. վճարներ սահմանել կենտ. Սոցապինը 75 միլ. ռուբ., պրոֆմիությունը 75 միլ. ռուբլի: Դրամարկղների ծախքերի պլանն արդյունաբերության ճյուղերի գծով մշակում է ՀԱՄԿԽ-ն աշխկոմի հետ միասին: Հանձնարարել նախագահությանը և Աշխկոմին վերջացնել այդ գործը յերկու շաբաթվա ընթացքում:

Այդ դրամարկղների ղեկավարությունը և գումարների ռացիոնալ և կանոնավոր կերպով ծախսվելու հսկողությունը վերապահվում է ՀԱՄԿԽ-ին, պրոֆմիութ. ԿԿ-րին և տեղային պրոֆմիություններին:

Արդյունաբերության մյուս բոլոր ճյուղերում փոխադ. օգն. դրամարկղները մնում են կամավոր վճարումների հիման վրա: Պրոֆմիությունները միջոցներ պետք է ձեռք առնեն նրանց աշխատանքները լավացնելու:

3. Առաջարկել բոլոր պրոֆմիություններին ավելի մեծ ուշադրություն դարձնել դրամարկղների վրա և նրանց շուրջը հիմնարկություններում, հարվածային շարքերից խրախանացնել ակտիվի ստեղծումը:

Պլենումը հանձնարարում է նախագահությանը ներկա վորոշումների հիման վրա յերկու շաբաթվա ընթացքում դրամարկղների համար մշակել օրենք և

դրամարկղների վերակառուցումն ապահովցնող դիրեկտիվներ։

### Կոոպերացիայի մասին

Կոոպերացիայի գործի և բանվորության սպասարկման լավացման այլև պրոֆկազմակերպությունների և բանվորական մասսայի կոոպերացիայի գործում ունեցած կազմակերպված մասնակցությունն ուժեղացնելու նպատակով ՀԱՄԿԽ-ն անհրաժեշտ է համարում կիրառել հետևյալ միջոցները.

1. Բանվորներին մթերքներ և արտադր. ապրանքներ մատակարարելու գործը պետք է սերտորեն կապված լինի պրոմֆինպլանի կատարման, աշխատանքի արտադրողականության և աշխատանքի դիսցիպլինայի դրության հետ։

2. Ցենտրոսայուզի և կոոպկազմակերպությունների բոլոր պլանները բանվորական սպասարկման վերաբերյալ, մերձքաղաքային տնտեսությունների ծավալումը, ֆինանսային պլանները և այլն պետք է մշակվեն ՀԱՄԿԽ-ի և տեղային պրոֆ. օրգանների մասնակցությամբ։ Ցենտրոսայուզն ընդունված պլանների իրագործման վերաբերյալ պետք է հաշիվ տա ՀԱՄԿԽ-ի նախագահության և միջմիութենական կազմակերպություններին։ ՀԱՄԿԽ-ի, ԿԿ-ների, միջմիութ. կազմակերպությունների և տեղային մյուս պրոֆօրգանների կողմից սահմանել սիստեմատիկ կոնտրոլ՝ կոոպերացիայի պլանների իրագործման համար։

Հանձնարարել նախագահությանը փետրվարի առաջին կեսում քննության առնել բանվորների սպասարկման վերաբերյալ առաջին կվարտալի համար Ցենտրո-



սայուզի մշակած պլանը և նրա իրագործման վրա սահմանել գործնական կոնտրոլ, ներգրավելով այդ գործի վրա տեղային պրոֆօրգաններին։

3. 2000-ից ոչ պակաս բանվոր ունեցող արդյունաբերական հիմնարկություններում և խոշոր տնտեսություններում ու շաքարի կոմբինատներում ֆաբգործկոմները կոոպերացիայի հետ միասին պետք է կազմակերպեն գործարանային կոոպերատիվներ, ընտրովի վարչություններով։

Գործարանային կոոպերատիվը պետք է կազմակերպի բաժանման կետ, ընդհանուր գործարան. և ցեխային ճաշարաններ, բանջարանոցներ, խոզանոցներ, իսկ որտեղ կարելի է կաթնային ֆերմա ևս։

Ֆաբգործկոմը պարտավորվում է ղեկավարել կոոպերատիվի վարչության և նրա բոլոր ճյուղերի ամենօրյա աշխատանքները։

Գործարանային կոոպերատիվը մտնում է կոոպերացիայի սիստեմի մեջ։

### Հավաքական պայմանագրի մասին

1. Պրոֆմիությունների կազմած հավաք. պայմանագիրը հիմքում վորոշելով բոլոր բանվորների աշխատանքի պայմանները, աշխատավարձը և նյութա-կուլթա-կենցաղային դրությունը, միաժամանակ պետք է միության անդամների համար ստեղծե մի շարք արտոնություններ, ինչպես օրինակ.— Առաջ մղում դեպի բարձր վորակի աշխատանք. կրկնավորակավորվելու իրավունք, փոխադրվել լավագույն մեքենայի վրա աշխատելու, լավագույն պայմանների մեջ դրված արհեստանոց և ցեխ։

2. Հավաք. պայմանագիրը, աշխատանքի նորմաների պարզումը և գնահատությունն առաջին հերթին պետք է քննության առնվեն միության անդամների ժողովում:

3. Անհրաժեշտ է ապահովել միության անդամների իսկական մասնակցությունը տեխնիկական բոլոր աշխատանողների, ինչպիսիք են.— տարիֆների վորոշումը և վորակավորում զանազան աշխատանքների ու բանվորների համար: Միաժամանակ արտադրության մեջ ավելի հետաքրքրություն ստեղծելու և վորակավոր աշխատանքի ավելի լավ վարձատրության համար, անհրաժեշտ է ներգրավել զանազան խմբակների և արհեստների ներկայացուցիչների (վորպիսիք են.— սլեսարներ, տոկարներ, ձուլողներ, զաբոյշչիկներ, պրոկատչիկներ, մեքենավարներ, վոստայնագործ արհեստավորներ, յերկաթուղ. մեքենավարներ, տրակտորիստներ և այլն), վորոնք կվորոշեն տեխնիկական աշխատանքի հնարավոր նորմաներ և տարիֆներ:

4. Նպատակահարմար համարել արտադրողական խորհրդակցություններում քննության առնել այն բանվոր-բանվորուհիների թեկնածությունն ավելի բարձր վորակի աշխատանքի փոխադրելու մասին, վորոնք աջող կերպով տիրապետելով արտադրության աշխատանքներին, բարձրացնում են իրենց աշխատելու վորակը:

Բանվորների կենցաղը լավացնելու ֆոնդ և բանվորների սոցկենցաղային սպասարկումը:

Այս ֆոնդը ծախսելու համար կազմված պլանը այլև բնակարան-կենցաղային և կրթական շինությունների համար կազմված նախագծերը պետք է քննության առնվեն ստորին և բարձրագույն պրոֆկազմակերպությունների կողմից միության անդամների ժողովներում: Բոլոր նոր կառուցված տների բնակելի տարածությունը պետք է առանձնապես պատկանի պրոֆմիության անդամներին: Պրոֆմիության անդամ հարվածայիններին տրվում են գործարաններին մոտ գտնվող ամենալավ բնակարանները:

2. Բնակարանները, մսուրները, մանկապարտեզները և այլ սոցկենցաղային հիմնարկությունները պետք է վերապահվեն արհմիության անդամներին նրանց սպասարկելու համար:

3. Պահպանել այդ ֆոնդը վորպես տրեստների և տնտեսակ. միությունների բանվորների կենցաղը լավացնող ֆոնդ այնտեղ, վորտեղ չկան տրեստներ:

4. Այդ միջոցներից բնակար.-շինության գործին հատկացված 75 տոկ. պետք է ծախսվի նաև կենցաղային հիմնարկությունների շինարարության վրա (մսուրներ, մանկապարտեզներ, ճաշարաններ):

5. ՀԱՄԿԽ-ի, ԺԲՏԽ և Աշխժողկոմի ներկայացուցիչներից կազմակերպել հատուկ կոմիտե, վորի նախագահը պետք է լինի ՀԱՄԿԽ-ի ներկայացուցիչը: Նման կոմիտեներ պետք է ստեղծվեն տեղերում ևս (հանրապետություն, շրջան և յերկիր):

Կոմիտեյի ֆունկցիայի մեջ մտնում է.—միջոցների ձեռք բերում, նրանց պահպանելը և բաժանելը: Բաժանելու համար կազմված պլանը հաստատում է ՀԱՄԿԽ-ը և ԺՏԳԽ:

Հանձնարարել նախագահությանը յերկու շաբաթվա ընթացքում մշակել համապատասխան որենսդրու-

թյան նախագիծ և ներկայացնել Ժողկոմին ի հաստատություն:

## Բանվորների և ադմինիստրա-տեխնիկական աշխատավորների պատրաստելու մասին

1. Ըստ ծավալված սոցմրցակցության և հարվածայնության պարգևատրող ֆոնդի իրականացման համար հիմնարկություններում լայնացնել և մեծացնել գոյություն ունեցող ֆոնդերը, վորոնք գոյացված են բանվորական առաջարկների հետևանքով տնտեսված գումարներից և սոցմրցման ու հարվածայնության ունեցած աջողություններից:

Պլենումը հանձնարարում է նախագահությանը մի ամսվա ընթացքում ԺՏԲԽ հետ միասին վերաքննության առնել հիմնարկություններում պարգևատրության վերաբերող որենսդրությունը: Կազմակերպել այն հիմնարկությունների պարգևատրությունը, վորոնք գերակատարել են պրոմֆինպլանը թե վորակով և թե քանակով՝ մանավանդ ինքնարժեքի իջեցումով, վորի համար բանվորներին և ադմինիստրա-տեխնիկական աշխատավորներին պարգևատրելու ֆոնդ հիմնելու հետ միասին այդպիսիները հիմնել նաև ԺՏԳԽ, ճանապարհ. հաղորդ., ժողով. մատակար. և Հողժողկոմում:

Հանձնարարել նախագահությանը պարզել դրամով կամ նատուրայով ինդիվիդուալ պարգև տալու ձևը բանվորական հիմնարկություններում:

2. Հիմնարկություններում ֆոնդերը գտնվում են գործարան. վարչության իրավասության տակ և ոգտա



գործելը տեղի յե ունենում այդ վարչության և ֆաբգործկոմի վորոշումով:

Կենտրոնական ֆոնդերի վերաբերյալ կարգադրություն անում է ՀԱՄԿԽ և ԺՏԳԽ, ՀԱՄԿԽ և ժող. պարեն. կոմիսարիատը՝ մասնակից անելով համապատասխան արհմիության ԿԿ-ներին:

Պրոմֆինպլանը գերակատարելում գերազանցող հիմնարկությունների պարգևատր. ֆոնդը կազմվում է տասը տոկ. հատկացումներից, վոր անում են վերը հիշված տնտեսական կազմակերպությունները (ԺՏԳԽ, ժող. մատակարար., ճանապ. հաղորդ. և հողկոմները):

Պլենումը անհրաժեշտ է համարում 1931 թ. հիմնել 60 միլ. ռ. կենտրոնացված ֆոնդ ԺՏԳԽ գծով պարգևատրելու մտքով: Այս գումարի հատկացումը կատարվում է յերեք հերթում: Թեթև արդյունաբերության հիմնարկության պարգևատրության համար այդ գումարից առանձնացվում է մեկ հինգերորդ մասը:

Հանձնարարել ՀԱՄԿԽ, ժող. մատակար., յերկաթուղ. և Հողժողկոմի հետ միասին յերկու դեկադի ժամանակամիջոցում հիմնել պարգևատր. նման ֆոնդեր:

Հանձնարարել նախագահությանը մի ամսվա ըն-
տարկել հատուկ որենք պարգևատու ֆոնդեր հիմ-
տարակել հատուկ որենք պարգևատու ֆոնդեր հիմ-
նելու և ոգտագործելու մասին:

## Աշխատանքի պաշտպանություն

Վորովհետև աշխատանքի պաշտպանության վրա մանավանդ տեխնիկական անվտանգության գծով ոգտագործվող գումարները տնտեսական հիմնարկների

և պրոֆկազմակերպությունների հանցավորության պատճառով միանգամայն անբավարար հետևանք են ունենում, որը ապացուցվում է ծանր ինդուստրիաներում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ անգործունեության փաստերի շարքերով, այլ և վորովհետև արդյունաբերության մի շարք ճյուղերում աշխատանքի ինսպեկտորները աշխատանքի պաշտպանության գծով ներկայացնում են վոչ մի բանով չպատճառաբանված պահանջներ, պլենումը հանձնարարում է նախագահությանը մի ամսվա ընթացքում աշխատկոմի և ԺՏԲԽ հետ միասին քննության առնել և հաստատել 1931 թ. աշխատանքի և ասիգնովկայի կոնկրետ պլանները աշխատանքի պաշտպանության շուրջը—115 միլ. ռուբ. ԺՏԲԽ, ճանապարհ. հաղորդակց. և ժողովրդ. մատակարարման կոմիսարիատի կողմից և սահմանել դրա համար անհրաժեշտ փոնդեր: Պրոֆմիությունները պետք է ամենօրյա հսկողություն սահմանեն աշխատանքի պաշտպանության վրա ծախսվող գումարների կանոնավոր և ռացիոնալ կերպով ծախսվելու վրա. պարտավորեցնել բոլոր արհմիությունների կազմակերպություններին և աշխատկոմին, վորպեսզի նրանք տնտեսական հիմնարկությունների հետ միասին ժամանակին դիմումներ անեն աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ապահովելու մտքով նկատի առնված միջոցները կիրառելու համար արվող ծախքերը պետք է համապատասխանեն արված ասիգնովկաներին, ծախսվեն ժամանակին և ծառայեն իրենց ուղղակի նպատակին: Աշխատանքի պաշտպանության փոնդերը գտնվում են տնտեսական հիմնարկությունների տրամադրության



տակ, ծախսվում են նշանակված կարիքների վրա, աշխկոմի կամ նրա շրջանային կամ յերկրային որգանների առաջարկի հիման վրա:

Աշխատանքի պաշտպանության վրա հսկողություն ունենալու և ինսպեկտորներին օգնելու համար բանվորներին մաքսիմալ կերպով ներգրավելու նպատակով անհրաժեշտ համարել ցեխերում և հիմնարկություններում կազմակերպել աշխատանքի պաշտպանության գծով և աշխկոմի հիմնարկությունների հսկողության տակ աշխատող հասարակական ինսպեկտորների ինստիտուտներ:

Հանձնարարել նախագահությանը աշխկոմի հետ միասին մի ամսվա ընթացքում պարզել հասարակական ինսպեկտորների աշխատանքի պաշտպանության գծով ունենալիք իրավունքներն ու պարտականությունները:

Հասարակական ինսպեկտորները առաջ են քաշվում կամավորության սկզբունքով արհմիության անդամների շարքերից, հարվածային բանվորներից, վորոնք ճանաչում են արտադրությունը և ինժեներ-տեխնիկական պերսոնալը: Իրենց աշխատանքները նրանք կատարում է ծառայությունից հետո:

## Ուսումնա-արտադրողական և քաղաքա-լուսավորության աշխատանքների մասին

Պլենումն անհրաժեշտ է համարում ուժեղացնել արհմիությունների նախաձեռնողական դերը հիմնարկություններում տարվող լուսավորա-կրթական և դպրոցա-արտադրողական գործերի վրա:

Պլենումը հաստատում է, վոր ֆաբզործկոմներին կից կազմակերպված կուլտ–խորհուրդները պետք է ղեկավարեն հիմնարկություններում գոյություն ունեցող բոլոր թե կրթական գործերը, և թե քաղաքալուսավորության ու դպրոցա–արտադրողական գործերին, վոր տարվում են միասնական պլանի, ուժերի ու միջոցների կենտրոնացման հիման վրա, վոր այդ ճյուղերին հատկացնում են պրոֆմիությունները, տնտեսական, կոոպերատիվի, հասարակական և պետական օրգանների կողմից:

Զննելով հիմնարկություններում կազմակերպվելիք կրթական աշխատանքների մասին գոյություն ունեցող մի շարք դիրեկտիվներին, ՀԱՄԿԽ գտնում է, վոր այդպիսիները բացակայում են աչքի ընկնող քանակի հիմնարկություններում: Պլենումը բոլոր ֆաբզործկոմներին առաջարկում է կարճ ժամանակում հիմնարկությունների կրթական աշխատանքների համար մշակել միասնական պլան, վորպես հիմք ընդունելով հիմնարկությունների պրոմֆինպլանի կատարումը և կադրերի պատրաստումը:

Միութենական կազմակերպությունները պետք է իրականացնեն սիստեմատիկ նախաձեռնությունը և հսկողությունը ֆաբզործկոմների կրթական գործի վերաբերյալ միասնական պլան կազմելու և իրականացնելու վրա:

Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի նախագահությանը մի ամսվա ընթացքում հիմնարկություններում տարվող կրթական, դպրոցա–արտադրողական աշխատանքների վերաբերյալ ունեցած փորձառությունների փոխանակության նպատակով հրավիրել խոշոր հիմնարկությունների կուլտ–խորհուրդների նախագահներին:



Անհրաժեշտ համարել ֆաբզործկոմների կողմից հաստատված միասնական պլանի սահմաններում յենթարկել հիմնարկությունների կուլտ–խորհուրդների ղեկավարությանը հանրակրթական կուրսերը, վորակը բարձրացնող կուրսերը, բանվորական յերեկոյան դըպրոցները, պրոֆտեխնիկական դպրոցները, արտադրության կուրսերը, կոնսուլտացիաները, բանֆակների համար պատրաստող կուրսեր և այլն:

Պլենումն անհրաժեշտ է համարում ապահովել կուլտ–խորհուրդների ղեկավարությունը, ապա ընդհանուր ուսումը տարածելու գործը իրականացնելու, դպրոցների պոլիտեխնիզացիայի յենթարկելու, անգրագիտությունը վերացնելու և աճող սերունդը զարգացնելու մտքով հիմնել մանկապարտեզները, հրապարակներ, (պիոներ· շարժման օգնելու) վորպես օգնող ուժ ներգրավել բանվոր· լայն մասսաներ և բոլոր միջոցները գործ դնելով ապահովել ազգային փոքրամասնության կրթական գործը:

Կուլտ–խորհրդի բոլոր աշխատանքների պատասխանատվությունը, վորի նախագահն է ֆաբզործկոմը, ընկնում է այս վերջինի վրա:

Հավանություն տալ հիմնարկություններում միացյալ դպրոցա–արտադրության կոմբինատի հիմնելու փորձին: Նպատակահարմար համարել այդ փորձի տարածումը ուրիշ խոշոր հիմնարկություններում: Սահմանել առավելություն կվալիֆիկացիան բարձրացնող կուրսեր և յերեկոյան ամենայի դպրոցներն ընդունվող այն միության անդամների համար: Տեխնիկումներ, բանֆակներ, բանվ. ունիվերսիտետներ և

այլ դպրոցական հիմնարկությունները ընդունվում են բացառապես միության անդամներ։

Մամուլ

Ներկա վորոշման հիման վրա առաջարկել ՀԱՄԿԽ-ին վերակառուցել արհմիության լրագրությունը արդյունաբերության զանազան ճյուղերի առանձնահատկությունների, այլև բանվորների առանձին խմբերի և նրանց սպասարկման հաշվառումով։ Լրագրության շուրջը գրավել բանթղթակիցների լայն կադրեր, առանձնապես արհեստավորների շարքերից։

Հաշվի առնելով պրոֆ. լրագրության ուժեղացող նշանակությունը, առանձնապես ՀԱՄԿԽ-ի կենտրոնական օրգան «Տրուդ»-ը, վորպես պրոֆշարժման ղեկավար և պրոֆաշխատանքի վերակառուցող, պլենումը հանձնարարում է նախագահությանը անցկացնել մի շարք միջոցներ, վոր ապահովեն «Տրուդ»-ի և լրագիրժուրնալների առաջիկա տիրաժի աճը։

Պլենումն անհրաժեշտ է համարում ՀԱՄԿԽ-ի և միությունների ԿԿ-ների կողմից ուժեղացնել ղեկավարությունը արհմիութ. բոլոր լրագրների վրա։

Միաժամանակ պլենումը նշելով գործարանային մամուլի խոշոր դերը պրոմֆինպլանի, աշխատանքի նոր մեթոդի և տեմպի կիրառման պայքարում, անհրաժեշտ է համարում ֆաբգործկոմների և պրոֆմամուլի կողմից ամեն կերպ ուժեղացնել այդ մամուլին հասցվող օգնությունը։

Պլենումն անհրաժեշտ է համարում լայնացնել և լավացնել ՀԱՄԿԽ-ի հրատարակության գործը բանվոր մասսային տալով մատչելի գրքեր սոցմրցման, հարվածայնության և միությունների վերակառուցման գծերով՝ անշեղ կերպով շարունակելով բանվոր-հարվածայինների գրած գրքերը հրատարակելու պրակտիկան։



Պրոֆկազմակերպությունները պետք է ակտիվ մասնակցություն ունենան այնպիսի գրքեր հրատարակելու գործում, վորոնք վերաբերում են հարվածային շարժմանը, պայքար գործարաններում, ցեխերում, ուժեղացնում են հարվածային բրիգադները, բոլշևիկ. տեմպ սոց. վերակառուցման մեջ և այլն։ ՀԱՄԿԽ հրատարակչությունը հանձնարարում է լայնացնել միության անդամների առանձին խմբերին և մասնավորապես բանվորական նոր շերտերի մեջ հետաքրքրություն առաջ բերող գրքերի հրատարակությունն ու տարածումը։

Նշելով պրոֆմամուլի տեխնիկական գրականության բազայի միանգամայն անբավարար դրությունը, պլենումն առաջարկում է նախագահությանը ամենակարճ ժամանակում անցնել պրոֆմամուլի բազա ստեղծելու վերաբերյալ միջոցներ կիրառելու գործին, առաջին հերթին «Տրուդ» լրագրի և ՀԱՄԿԽ-ի հրատարակության համար պրոֆմամուլի զարգացման և նրա հետագա աճումի ապահովացումով։

Պլենումը հավանություն է տալիս նախագահության վորոշմանը՝ կիսագրագետների համար լրագիր հրատարակելու վերաբերյալ։

ՀԱՄԿԽ-ի հինգերորդ պլենումն առաջարկում է բոլոր պրոֆկազմակերպություններին լայն բացատրություն տալ ներկա վորոշումների մասին պրոֆմիությունների անդամներին և բանվորական մնացող մաս-

սաներին։ Այդ վորոշումները բխում են կուսակցության և նրա ԿԿ-ի դիրեկտիվներից՝ պրոֆմիությունների աշխատանքների մասին, վորոնք հանդիսանում են խոշորագույն քայլեր դեպի առաջ՝ հետագա աճման ճանապարհին և ուժեղացնում պրոֆշարժումները։

Պլենումն ընդգծում է, վոր միությունների վերակառուցման աջող լրացումի և յերեսները դեպի գործարան դարձնելու հիմունք հանդիսանում է պրոլետարիատի ինքնաքննադատության հետագա լայն ծավալումը պրոֆմիություններում, բանվորակ. ինիցիատիվայի արագ և լիակատար ռեալիզացիայի հիմքի վրա, վորը ուղղված է դեպի կուսակցության գլխավոր գծի իրականացումը։

---

## 1931 ԹՎԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿՈՆՏՐՈԼԱՅԱՆ ԹՎԵՐԻ ՄԱՍԻՆ

*ՀԱՄԿԽ-ի (Համամիութենական Պրոֆմիությունների Կենտրոնական Խորհուրդ) հինգերորդ պլենումի բանաձևը, ըստ զեկուցումների ընկ. Կոսսիորի—ԽՍՀՄ Ժողտնտխորհ, ընկ. Ռուխիմովիչի—ՀԺԿ, ընկ. Վեյնբերգի—ՀԱՄԿԽ և ընկ.* Կրավալի—ԽՍՀՄ Աշխժողկոմ։

ՀԱՄԿԽ-ի հինգերորդ պլենումը լիովին հավանություն է տալիս ՀԿԿ (բ) Կենտկոմի, ԿՎՀ-ի դեկտեմբերի պլենումի և Կենտգործկոմի սեսիայի վորոշումներին 1931 թվի ժողովրդական տնտեսության պլանի վերաբերյալ։

ՀԱՄԿԽ-ի պլենումը գտնում է, վոր կուսակցության ու կառավարության կողմից ընդունված 1931 թվի ժողովրդական տնտեսության պլանի անպայման կատարումը, վորն ապահովում է սոցիալիստական շինարարության բարձր տեմպերի ծավալումը, հնգամյակը չորս տարում կիրառումը և ԽՍՀՄ սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման իրագործումը, պետք է դառնա վճռական խնդիր բոլոր պրոֆկազմակերպությունների և ամբողջ բանվոր դասակարգի համար։

Յերկրի ինդուստրացման բոլշևիկյան տեմպերը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառու-

ցումը, ընդունված կուսակցության և կառավարության կողմից 1931 թվի առիթով, աշխատավոր լայն մասսաներին նոր աշխատանքի թափի չեն կոչում և պրոֆմիություններից պահանջում են հետագայում մոբիլիզացիայի ենթարկել բանվոր դասակարգին, կատարելու համար կոնկրետ խնդիրները—հնգամյակի երրորդ վճռական տարվա, ծավալելով սոցմրցակցությունը, հարվածայնությունը և հանդիպական արդֆինպլանը:

Արդֆինպլանի կատարումը—սոցիալիստական շինարարության վճռական ճյուղերում—(վառելանյութ, մետաղ, տրանսպորտ), իր ուշադրության կենտրոնը դարձնելով, պրոֆմիությունները պետք է կազմակերպողը հանդիսանան բանվորական մասսաների պայքարի—արտադրական հնարավորությունների ցուցադրման համար, ամեն մի ճյուղում, ամեն մի ցեխում և ամեն մի ձեռնարկի մեջ, լավացնելու համար արտադրանքի որակը, սոցիալիստական ռացիոնալացումը, նոր տեխնիկայի յուրացումը, ապահովելով հետագա աշխատանքի արտադրողականության աճը, աշխատանքի և արտադրության պայմանները:

Ելնելով այս բանից, ՀԱՄԿԽ-ի պլենումն անհրաժեշտ է համարում.

1. Վառելանյութի բնագավառում

Վառելանյութի ծրագրի (83,6 միլիոն տոնն ածուխ) մատնանշված կոնտրոլային թվերն անպայման կատարելու նպատակով:

1) Առաջարկել հանքափորների միությանը—տնտեսական օրգանների հետ միասին—ամենակարճ ժամանակամիջոցում վերակառուցել աշխատանքների կազմակերպումը մեքենայացված շախտաներում, հարմարեցնելով այն՝ մեքենայացված ձևով հանքի ստացումը (առաջին հերթին ստեղծելով արտադրական բրիգադներ), հատուկ ուշադրություն դարձնելով նախապատրաստական աշխատանքների մեքենացման վրա—շախտաների ներքին աշխատանքներում:

2) Ածխային շրջանների պրոֆմիութենական կազմակերպություններին—տնտեսական օրգանների հետ միասին—ձեռք բերել շախտաների աշխատանքների մեջ հմայքի բարձրացման, հերթի փոխարինում ավելացնելով, մեխանիզմն ավելի լավ ձևով օգտագործելով—(ինչպես փորող մեքենաների և մուրճերի), ավելացնելով ցիկլների թիվը:

Այս իսկ նպատակով՝ պարտավորեցնել հանքափորների կենտկոմին ու նրա տեղական կազմակերպությունների—տնտեսական կազմակերպությունների հետ միասին—տարածել Ցիլիմոնովի, Կասատուրովի բրիգադների և ինժեներ Կարտաշևի փորձերը, վորոնք կարողացել են բարձրացնել փորող մեքենաների արտադրության չափը 2100 տոննից (միջին թվով)— մի ամսում—մինչև 5000 տոննի, քննելով այդ փորձերը արտադրական խորհրդակցությունների մեջ և ապահովելով այդ աշխատանքի մեթոդների փոխանցումը մինչև 1931 թվի փետրվարի 15-ը վոչ պակաս քան 50 խոշոր շախտաներ, այն նպատակով, վոր 1931 թվի առաջին կվարտալի ընթացքում այդ մեթոդները տարածվեն ամբողջ Դոնբասում և այլ ածխային ռայոններում:

Հանքափորների կենտկոմին առաջարկել, վորպեսզի ապահովի մաքսիմալ տարածումը աշխատանքի նաև ուրիշ մեթոդներ, վորոնք տվել են փորող մեքենաների արտադրության բարձրացում և ժամանակին խնայողություն, մասնավորապես գերմանացի ինժեներ Լիպխարտի փորձը (Բրյանսկի շախտա), վորն զգալիորեն կրճատել է ժամանակը կոնվեյերի փոխադրության գործում:

3) Միության կազմակերպությունների ուշադրությունը կենտրոնացնել բանվորական կադրերի ամրացման և առաջին հերթին այն բանվորների, վորոնք սպասարկում են մեխանիզմը (մեքենավարները—փորող մեքենաների, փականագործները, ելեքտրոտեխնիկները և այլն), ներգրավելով նրանց սոցիալիստական մրցակցության և հարվածայնության բոլոր ձևերի մեջ, կազմակերպելով նրանց աշխատանքի ամենալավ ձևերը:

4) Պարտավորեցնել ՀԱՄԿԽ–ին, Ուրալի և Արևմտյան Սիբիրի պրոֆխորհուրդներին, վորպեսզի գործնական ողնություն ցույց տան հանքափորների միությանը— շախտաներում աշխատանքի նորմաները լավացնելու և անց կացնելու գործում և վերանայելու գոյություն ունեցող արտադրության նորմաները, հարվածայնության փորձի հիման վրա — մեքենայացման տեմպերի համապատասխան, նաև ապահովել ղեկավարող պրոֆեսիաների աշխատանքի լավ վարձատրումը:

Վերջացնել նորմաների և հատով գնահատվող աշխատանքի վերանայումը Դոնբասի շախտաներում—առ 15 փետրվարի:



5) ԽՍՀՄ Ժողտնտխորհին առաջարկել, վոր արդյունաբերական ձեռնարկների մի մասի դիրեկտորներին մոբիլիզացիայի յենթարկի և ուղարկի վորպես ղեկավարների· նմանապես մոբիլիզացիայի յենթարկի աշխատանքը նորմայի յենթարկող աշխատավորներին:

6) Պրոֆմիութենական և տնտեսական օրգաններին սիստեմատիկ ողնություն ցույց տալ, ածխային շրջաններն ուղարկելով առանձին բրիգադներ նպատակային խնդիրներով (մեխանիզմների վերանորոգում), ապահովել ածխային նոր ռայոնները մեխանիզմով, նմանապես ուժեղ հսկողություն ունենալ, վոր պատրաստվեն և վառելանյութերի ռայոններն ուղարկվեն անհրաժեշտ նյութերը և սարքավորումը:

7) Պարտավորեցնել բոլոր պրոֆկազմակերպություններին, մասնավորապես գործարանային կոմիտեներին, վորպեսզի գործարանի վարչության հետ միասին վճռական միջոցներ ձեռք առնեն վառելանյութ տնտեսելու խիստ միջոցներ հաստատելու, ամենամեծ չափով իջեցնեն ծախսի նորմաները և փոխարինեն բարձր արժեք ունեցող վառելանյութերը տեղական, ցածր արժեք ունեցող նյութերով (փայտ, տորֆ, սլանեց), հասցնելով վառելանյութերի պլանները և ծախսելու նորմաները կաչեգարներին, լայն կերպով կիրառելով վառելանյութը խնայելու համար պարգևատրության սիստեմը:

Այս նպատակով պարտավորեցնել փաբգործտեղկոմներին ակտիվացնել ձեռնարկների եներգո–բյուրոների աշխատանքները:

8) ՀԱՄԿԽ–ի նախագահությանը հանձնարարել·

ա) Հանքավորների կենտկոմի և ՎՄԲԻՏ-ի միջոցով մի ամսվա ընթացքում ստուգել շախտային շինարարության վիճակը։

բ) Հանքավորների կենտկոմի և Աշխժողկոմի հետ միասին մշակել վորակյալ բանվորների մի մասին (զաբոյշչիկ, փորող մեքենավարներ և այլն) ուղարկելու հարցը— Կուզբասի և Կարագանդի ռայոնները։

գ) ԽՍՀՄ Ժողտնտխորհի և Աշխժողկոմատի հետ միասին, մի ամսվա ընթացքում ապահովել— յուրացուցիչ կերպով ածխային ռայոնները հինգ հարյուր վորակյալ մետաղագործ ուղարկելու հարցը։

դ) Վոչ ուշ քան յերկու ամսվա ընթացքում գտնել և ուղարկել յերկու հարյուր պրոֆաշխատավոր, խոշոր շախտկոմներն ուժեղացնելու նպատակով։

## 2. Մետաղի բնագավառում

1) Մետաղագործների միությանն առաջարկել— մոբիլիզացիայի յենթարկել— բանվորներին և ինժեներ-տեխնիկական պերսոնալին, վճռականորեն պայքարելու համար վթարների, դոմենի վառարանների և վարձու դազգյահների կանգ առնելու դեմ, կազմակերպելով մրցակցության նվաճումների և օգտագործումների օրինակելիության համար, ավելի ռացիոնալ դրություն ստեղծելով շախտաների մեջ, լավ տեսակավորել վառելանյութը և հանքերը և մաքսիմալ չափով ավելացնել բանվորական ուժերը— ագրեգատների— ամբողջ տարվա ընթացքում, վորի համար ուսումնասիրել և գործարանների (Ձերժինսկու անվան) փորձերը տեղափոխել ուրիշների— հիմնական վերանորոգման—Դոմենի վառարանների և մարտյոնների— ժամկետի կրճատման տեսակետից։

2) Մետաղագործների կենտկոմին առաջարկել— յերկու ամսվա ընթացքում անց կացնել— Դնեպրոպետրովսկում, Ուրալում և Դոնբասում, մասնակից անելով նաև մանր մետաղագործական գործարաններին — ռայոնական կոնֆերենցիաներ հանքավորների, պողպատաձուլների և ԻՏՐ.երի, վորպեսզի փորձի փոխանակության հիման վրա ավելի լավ օգտագործվեն դոմենները և մարտյոնները և ավելի ռացիոնալ ռեժիմ ստեղծվի նրանց աշխատանքներում։

3) ՀԱՄԿԽ-ին առաջարկել, վոր իր հատուկ հսկողության տակ առնի Մագնիտագորսկու և Կուզնեցկու գործարանների շինարարությունը, ապահովելով միասին աշխատանքը— մետաղագործների, քիմիկների, կառուցողների, յերկաթուղայինների և անտառաշխ- բանվորների միությունների, վճռելու համար այն հար ցերը, վորոնք կապված են այդ գործարանների կառուց ման և գործի դրման հետ, կառավարության վորոշած ժամանակին։

4) Պրոֆմիութենական կազմակերպություններին առաջարկվում է վճռական պայքար մետաղի ռացիոնալ տնտեսման համար, ձգտելով, վոր ձեռնարկների ադմինիստրացիան մետաղը ծախսելու համար նորմաներ մշակի— պրոդուկցիայի զանազան տեսակների համար, նմանապես, մետաղը փոխարինել փայտով, ճկուն մասսաներով և լայն կիրառի ավտոգեն ջեռուցքի արմատացումը։

5) Քիմիկների միությանն առաջարկվում է ամեն կերպ աշխատել լավացնելու կոկսի վորակը և բարձ-

րացնել կոկսի արտադրությունն ի հաշիվ սովորական ածուխի ծախսի կոեֆիցիենտի, փորձնական կոնֆերենցիաներ հրավիրելով— հանքագործների և մետաղագործների հետ միասին:

6) ԽՍՀՄ Ժողտնտխորհի առաջ հարց բարձրացնել, վորպեսզի փոխի մետաղի և վառելանյութի բաշխման ու մատակարարման ամբողջ սիստեմը, ճկուն կերպով կառավարելով կանխիկ ռեսուրսները և ամենա մեծ չափով ապահովելով հիմնական սպառողին:

3. Տրանսպորտի բնագավառում

1) Հանձնարարել ՀԱՄԿԽ–ի նախագահությանը, վոր վոչ ուշ քան փետրվարի 16–ը մոբիլիզացիայի յենթարկի յերկու հարյուր հոգի— ղեկավար պրոֆաշխատավոր, միջմիութենական և միութենական կազմակերպություններից, յերկաթուղայինների միության միջին և վարի կազմակերպություններն ուժեղացնելու համար:

2) Միության կազմակերպություններին, և առաջին հերթին մետաղագործների միությանն առաջարկել, վոր իր հատուկ սիստեմատիկ հսկողության տակ առնի յերկաթուղային և ջրային տրանսպորտի պատվերների կատարումը, ապահովելով այդ պատվերների ճիշտ ժամանակին լրացումը:

3) Կազմակերպել— յերկրային, հանրապետական և մարզային պրոֆխորհուրդներին կից հատուկ խմբակներ տրանսպորտի համար, միաժամանակ անձնական պատասխանատվություն դնել յերկրային, հանրապետական և մարզային պրոֆխորհուրդների նախագահների վրա, ժամանակին և ճիշտ կատարելու համար



կառավարության և ՀԿԿ (բ) Կենտկոմի դիրեկտիվները — տրանսպորտի վերաբերյալ: Միջմիութենական կազմակերպությունները պարտավոր են արդյունաբերական ձեռնարկների արդֆինպլանների կատարման որինակելի աշխատանքները տեղափոխելու պայքարի համար— տրանսպորտի ձեռնարկների աշխատանքի դիսցիպլինայի և, լայն կիրառելով հասարակական բուքսիրի փորձը, յետ մնացող տրանսպորտի մասը:

4) Բոլոր պրոֆկազմակերպություններին առաջարկվում է վճռական միջոցներ ձեռք առնել մաքսիմալ չափով ապահովելու համար վագոնների արագ բարձումը և դատարկումը. մի շարք հանգույցային կայարաններում կազմակերպել պոստեր, վորպեսզի հսկեն բեռների արագ տեղափոխելուն, վճռական պայքար մղեն և լուծարքի յենթարկեն վագոնների և շոգեշարժների կանգ առնելու դեմ:

5) Նշելով չափազանց թույլ աշխ. դիսցիպլինան տրանսպորտի վրա, վորը դանդաղեցնում է յերթևեկությունը, տեղի յեն ունենում կանգ առումներ, ուշացումներ և վթարներ, պլենումը պարտավորեցնում է յերկաթուղայինների և ջրայինների Կենտկոմին ծավալել տրանսպորտի բոլոր ձեռնարկներում ընկերական դատեր և կազմակերպել միացյալ կոնտրոլ, կատարելու համար նոր որենքը տրանսպորտի դիսցիպլինար գանձման, կանգ չառնելով պատժելու վոչ մի միջոցի առաջ միութենական կազմակերպությունների և նրանց ղեկավարների նկատմամբ, վորոնք չեն ապահովում պրոլետարական աշխ. դիսցիպլինայի ամրացումը յերկաթուղային և ջրային տրանսպորտի վրա:

6) Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի նախագահությանը քսան որվա ընթացքում մշակել կոնկրետ միջոցառումներ միությունների— 1931 թվի նավիգացիայի գործին մասնակցելու վերաբերյալ (նավաշինարարության ծրագրի իրագործումը, նավերի ժամանակին վերանորոգումը, նավահանգիստների բարձող և դատարկող մեխանիզմի մատակարարումը, տոննաժի մաքսիմալ ոգտագործման համար միջոցառումներ և այլն):

## 4. Հիմնական շինարարության բնագավառում

1931 թվի հիմնական շինարարության (17 միլիարդ յերկու հարյուր միլիոն ամբողջ ժող- տնտեսության համար, վորի մեջ մտնում ե 5,5 միլիարդ արդյունաբերությունը) ծրագրի կիրառումը պահանջում ե պրոֆմիություններից և տնտ. որգաններից ուժերի և միջոցների մաքսիմալ կենտրոնացում վճռական ճյուղերում, ժամկետների արագացում և շինարարության արժեքի եժանացում, վորի համար միության կազմակերպություններին անհրաժեշտ ե.

1) Անմիջական մասնակցություն ունենալ շինարարության որագրային պլանների մշակման գործում նաև վերջացած շենքերն ոգտագործելու պլանի մեջ, ձգտելով հաստատել աշխատանքների ճիշտ հերթականություն այն հաշվով, վոր առանձին ավարտվող ցեխերը և ագրեգատներն արդեն արդյունք տան 1931 թըվին, մինչև ամբողջ շինարարության լիակատար ավարտումը:

Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել կառուցվող շինարարության նախապատրաստությանը, վորպեսզի գործի դրվի և իրագործվի վորոշած ծրագիրը:



2) Կազմակերպել վերահսկողություն, վորպեսզի 1931 թվի շինարարությունը ժամանակին մատակարարվի բանվորական ուժով, շինանյութերով, նախագծերով, աշխատանքային գծագրումներով և ճշգրիտ արտադրական նախահաշիվներով:

3) Կառուցողների միությանն առաջարկվում ե ամեն կերպ աշխատել ավելացնելու շինանյութերի վրա աշխատող բանվորների հերթը, կառուցողական աշխատանքներն անցկացնել անընդհատականի—կլոր տարին, լիովին ոգտագործել մեխանիզմը, վճռականորեն վերացնել ամեն տեսակի ավելորդ բաները շինարարության մեջ, ապահովել տրված խնդրի կատարումը կառուցող բանվորների արտադրական աշխատանքի բարձրացման տեսակետից և իջեցնել կառուցման ինքնարժեքը, վոչ պակաս, քան 12 տոկոսով:

4) ՀԱՄԿԽ-ի նախագահությանն առաջարկել ոգնություն ցույց տալ կառուցողների միությանը վորի որգանների ամրացմամբ — նոր խոշոր կառուցումների ժամանակ, առանձնապես Ուրալ-Կուզբասի ռայոնի կառուցումների գործում:

5) Պլենումը պարտավորեցնում ե բոլոր միջմիութենական կազմակերպություններին և անտառշինբանվորների միությանն ապահովել անպայման կատարումը և գերակատարումն անտառարդյունաբերության արդֆինպլանը 1931 թվի, աշխատանքի լավագույն ձեվով կազմակերպման հիման վրա, բարձրացնել արտադրողականությունը (բրիգադային մեթոդ— աշխատանքի բաժանումով և այլն) և զարգացնել անտառմասերում և նման տեղերում սոցմրցակցությունը և հարվածայնությունը: Հատուկ ուշադրություն դարձ-

նել ժամանակին նախապատրաստելու անտառանյութերի հղման գործին— գետերի վրայով:

6) Պլենումը միանգամայն անբավարար է համարում տնտեսական, միութենական և պլանային կազմակերպությունների գործունեությունը, կատարելու համար ՀԿԿ (բ) 16-րդ համագումարի կարևորագույն դիրեկտիվի, այն է՝ Արևելքում ստեղծել յերկրորդ մետաղագործական բազա: Պարտավորեցնել— մետաղագործների, հանքափորների, քիմիկների, յերկաթուղայինների և կառուցողների կենտկոմներին, ինչպես և Ուրալի, Սիբիրի և Ղազակստանի պրոֆխորհուրդներին ամենաակտիվ մասնակցություն ունենալ այդ աշխատանքում և ապահովել մոբիլիզացիան պրոլետարական լայն հասարակայնության, ամենաշտապ կերպով կատարելու Ուրալ-Կուզբասի կառուցման պլանը:

Պլենումն առաջարկում է ՀԱՄԿԽ-ի նախագահությանը, վորպեսզի ամեն կերպ իրացնի տնտեսական և պլանային կազմակերպությունների միջոցով, վոր վերջիններս շտապ կարգով մշակեն Ուրալ-Կուզնեցկի պրոբլեմի իրագործման ծավալուն պլանը:

7) ՀԱՄԿԽ-ի պլենումն ընդգծում է, վոր 1931 թվի պլանի կատարման վճռական պայմանն է հանդիսանում, նախատեսված կոնտրոլային թվերով, աշխատանքի արտադրության բարձրացումը, ժողտնտխորհի արդյունաբերության — 28 տոկոսով, ինքնարժեքի իջեցումը— տասը տոկոսով և արտադրանքի վորակի բարելավումը:

Նշելով վորակի նշանակության թերագնահատումը մի շարք տնտեսական և միութենական կազմակերպությունների կողմից,—պլենումը գտնում է, վոր այս գոր



ծում անհրաժեշտ է կատարել վճռական բեկում, և
վոր այդ գործում անհրաժեշտ է կատարել ձըց—:
վոր վորակի ցուցանիշները պետք է դառնան հիմնական չափանիշները յուրաքանչյուր պրոֆկազմակերպության գործում:
"

Պլենումն առաջարկում է.

Աշխատանքի արտադրողականության բարձրացման

բնագավառում

1) Նկատի առնելով բանվորների տեխնիկական զինավորման զգալի աճը և անհրաժեշտությունը— տեխնիկական նորմիրովկան տեխնիկական զինավորման հետ համակերպումը, տեմպերի ռացիոնալացումը և այլն, առաջարկել բոլոր միութենական և տնտեսական կազմակերպություններին անմիջապես կազմակերպել արդյունքի-նորմաների վերանայումը և արժեքավորումը, նպատակով, վոր լիովին ապահովվի աշխատանքի արտադրողականության աճը և աշխատավարձը: Մաքսիմալ տեխնիկական հնարավոր նորմաները հաստատվում են լավ հարմարված բանվորի աշխատանքը նկատի առնելով:

Կտորով աշխատանքի գնահատումը վերանայելիս և վորոշելիս, ապահովել աշխատավարձի ընդհանուր ֆոնդից յելնելով, վոր հաստատված է 1931 թվի համար գծված արդֆինպլանով:

Պրոֆմիութենական և տնտեսական կազմակերպություններին առաջարկվում է վճռական միջոցներ ձեռք առնել ներդրավելու համար բանվորներին ուղղակի կտորով աշխատանքի և աշխատավարձի հարուցման այլ ձևերով, վորոնք անմիջական կապ են ստեղծում

աշխատավարձի աճման և աշխատանքի արտադրողականության միջև, միմյանցից կախում ունենալու ձևով: Պարտավորեցնել ժողտնտխորհին ապահովել ռացիոնալացման միջոցառումները 1931 թվին նշված արդֆինպլանի որակական ցուցանիշները կիրառելու նպատակով:

2) Միութենական կազմակերպությունները և առաջին հերթին փարզավկոմները— տնտ. օրգանների հետ միասին— պետք է ապահովեն ընթացիկ տարվա առաջին կվարտալում լիակատար սարքավորումը և այդ հիմունքով պետք է ձեռք բերեն ճշգրիտ տեխնիկական նորմաներ, ռացիոնալ կերպով օգտագործելու համար սարքավորումը և նրա լիակատար աշխատեցումը:

3) Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի նախագահությանը յերկու ամսվա ընթացքում ուսումնասիրել տեխնիկական նորմիրովկայի յենթարկելու և աշխատանքի կազմակերպման գործը Ստալինգրադի տրակտորի գործարանում և Ռոստովի Սելմաշ-ում, և մշակել աշխատանքի կազմակերպման հարցը— տեխնիկական նորմիրովկայի և աշխատանքի վարձատրության սիստեմները— նոր գործարաններում:

4) Միութենական կազմակերպություններին առաջարկվում է մի ամսվա ընթացքում ստուգել, թե որքան է բանվորական ուժը համապատասխանում նշված նորմաներին, որոշելու համար, բան. ուժի ավելցուկը թե գործարանում և թե ընդհանրապես, նաև յուրաքանչյուր արտադրական բաժնում, միջոցներ ձեռք առնելով լավագույն ձևով օգտագործելու բան. ուժը և



անմիջապես տեղափոխելու ավելցուկը ուրիշ ձեռնարկներ:

Ինքնարժեքի իջեցման բնագավառում

Միութենական կազմակերպություններին առաջարկվում է անպայման ապահովել ինքնարժեքի իջեցման վերաբերյալ տրված խնդրի կատարումը, որի համար անմիջապես արտադրական խորհրդակցությունների մեջ մշակել միջոցառումների կոնկրետ պլանը ինքնարժեքի իջեցման— տվյալ ձեռնարկում, ցեխում և առանձին բաժնում, մոբիլիզացիայի յենթարկելով բանվորներին և ԻՏՐ-ին շտապ կարգով իրագործելու այդ միջոցառումները, ձեռնարկներում անց կացնելով խստագույն էկոնոմիայի ռեժիմը:

Հանձնարարել արտադրողական միությունների կենտկոմներին յերկու ամսվա ընթացքում ուսումնասիրել կալկուլյացիան արտադրանքի հիմնական տեսակների և պարզել թե ինչու միատեսակ ապրանքի ինքնարժեքը տարբեր է, տարբեր գործարաններում: Հետեվանքների մասին զեկուցել ՀԱՄԿԽ-ի նախագահությանը:

Արտադրանքի որակի բարելավման բնագավառում

ՀԱՄԿԽ-ի պլենումը լիովին հավանություն է տալիս ՀԱՄԿԽ-ի նախագահության և Համամիութենական կոնֆերենցիայի որոշմանն արտադրանքի որակի վերաբերյալ և առաջարկում է միութենական բոլոր կազմակերպություններին ծավալել գործնական աշխատանք իրագործելու համար այդ որոշումները, լայն տարածելով առանձին ձեռնարկների փորձերը

(Հարվածային բրիգադներ — օրինակելի արտադրանքի և այլն)։

8) Նշելով վոչ լրիվ տեխնիկական ղեկավարությունը և խորհրդատվությունը ձեռնարկներին— տրեստական միությունների կողմից, առանձնապես արտադրության ռացիոնալացման հարցում, անհրաժեշտ համարել, վոր ԽՍՀՄ Ժողտնտխորհի նախագահությունը հատկապես քննի ձեռնարկներին տեխնիկական ղեկավարություն ցույց տալու հարցը, տարածելով՝ փորձված մասնագետների ձեռնարկներն ուղարկելու փորձառությունը, խորհուրդ տալու համար առանձին հարցերի նկատմամբ։

9) Ներգրավելով նորանոր բանվորական կադրեր սոցմրցակցության և հարվածայնության մեջ, հասնել այն բանին, վոր մրցակցությունը դառնա յուրաքանչյուր բանվորի գործը։ Միութենական կազմակերպությունները պետք է համառորեն աշխատեն վորակական ցուցանիշների վրա— մրցակցության գործում, հարվածային բրիգադների աշխատանքների լավագույն կազմակերպման վրա, ուղղելով սոցմրցակցությունը և հարվածայնությունը դեպի պայքար արտադրության ռացիոնալացման համար, նոր տեխնիկան յուրացնելու համար, աշխատանքի լավ կազմակերպման և պլանի յենթարկելու համար։

Պլենումը հատուկ նշանակություն է տալիս հաշվի ռացիոնալացման փորձին, վոր առաջ են քաշել Հյուսիսային-Կովկասի հարվածայինները և բանվորների սոցիալիստական պատվերին, վոր առաջարկել են Լիսիչանի շախտյորները, և առաջարկում է միութենական կազմակերպություններին լայնորեն կիրառել այդ փորձը, վորպեսզի նա իր լայն կիրառումը գտնի բոլոր ձեռնարկներում։



Միությունների կարևորագույն խնդիրն է, վոր ղեկավարի սոցմրցակցությունը և սիստեմատիկորեն կազմակերպի կատարված փորձերի փոխանակում— բրիգադների, ցեխերի, յեռյակների, արդյունաբերության ճյուղերի միջև, լայն կերպով հրապարակի վոչ միայն հետևանքներն այլ և այն ճանապարհներն ու միջոցները, վորոնց օգնությամբ այդ հետևանքներն ստացվել են։

Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի նախագահությանը— ԽՍՀՄ Ժողտնտխորհի հետ միասին— մի ամսվա ընթացքում մշակի այն կոնկրետ միջոցառումները, վորոնցով կարելի յե ապահովել կիրառումը մի ձեռնարկի բանվորների առաջադրությունների և գյուտերի— նույնատեսակ արդյունաբերություն ունեցող մյուս բոլոր ձեռնարկների կողմից։ Մետաղագործների Կենտկոմին— տրեստական միությունների հետ միասին— առաջարկվում է յերկու ամսվա ընթացքում հավաքել և կցել ա. ն բոլոր արժեքավոր գյուտերը սև մետաղագործության վերաբերյալ, իսկ հանքափորների Կենտկոմին առաջարկել նույնն անել ածուխ ստանալու մեխանիզացիայի վերաբերյալ, մասսայական տարածման համար։

10) Նշելով մասնագետների հսկայական նշանակությունը հնգամյակի յերրորդ տարվա խնդիրները կիրառելու համար, պլենումն առաջարկում է բոլոր պրոֆկազմակերպություններին լայն կերպով ներգրավել ԻՏՍ-ի օրգանները— պրոֆմիությունների ամբողջ աշխատանքում— կապված արդֆինպլանի կատարման

հետ, ձգտելով լրիվին գրավել ԻՏՐ-ը սոցմրցակցության մեջ, նրանց լրիվին դարձնելով դեպի աշխատանքի հարվածային տեմպերը և ամեն կերպ զարգացնել նրանց ստեղծագործող նախաձեռնությունը:

Անհրաժեշտ է մաքսիմալ կերպով բարձրացնել մասնագետների աշխատանքի տեմպերն ու վորակը, նրանց տեխնիկական ղեկավարության պատասխանատվությունն արտադրության զարգացման կյանքում:

11) Թեթև արդյունաբերության 1931 թվի արտադրական ծրագրի նշված կիրառումը լրիվին ապահովելով, միութենական կազմակերպություններն իրենց գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելու յեն ներքին հում նյութի բազայի վրա (բամբակ, ճակնդեղ, վուշ, կաուչուկ, արհեստական կաշի, կանեփ և այլն), հատուկ ուշադրություն դարձնելով գիտական-հետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների աշխատանքների վրա, վորոնք աշխատում են ներքին հում նյութերի վրա, վոր ոգտագործելու յե արդյունաբերությունը:

12) Պարտավորեցնել միությունների կենտկոմներին ընդհանրացնել հանդիպական արդֆինպլանների ցուցանիշներն արդյունաբերության ճյուղերում. ապահովելով մաքսիմալ արտացոլումը հանդիպականների ցուցանիշների— 1931 թվի յերկրորդ կվարտալի պլանում:

Պլենումը հանձնարարում է բոլոր ձեռնարկներին ոգտագործել Իլյիչի անվան Մարիուպոլի գործարանի փորձը հանդիպականների ոպերատիվ պլանները կազմելիս (ըստ հնգորյակների և տասնորյակների):



13) Պլենումը պարտավորեցնում է միությունների կենտկոմներին անմիջական մասնակցություն ունենալ Ժողտնտխորհի և Աշխժողկոմի աշխատանքներին— հնգամյա պլանի կոնկրետացմանը— կադրեր նախապատրաստելու արդյունաբերության համապատասխան ճյուղերի համար, այդ բանում հատուկ ուշադրություն դարձնելով բանվորական ուժի պատրաստմանը, վորոնք վարում են ցեխերը և արհեստները:

Ֆաբգործկոմներին առաջարկվում է ստուգել ձեռնարկներում գոյություն ունեցող կոնկրետ պլանները 1931 թվին բանվորական ուժի— կարիքները ծածկելու տեսակետից, անմիջական մասնակցություն ունենալ ՖԶՈՒ կազմակերպելիս, ՇՈՒՄՊ և այլ բան. ուժեր նախապատրաստող դպրոցներում:

Բանվորական վորակյալ ուժեր պատրաստող հիմնական խողովակն է ՖԶՈՒ դպրոցը, ուստի, պետք է միջոցներ ձեռք առնվեն մաքսիմալ չափով ծավալելու համար ՖԶՈՒ դպրոցների ցանցը և յեղածները լրիվին ոգտագործել. նաև պետք է լայն կերպով ոգտագործվեն բոլոր միջոցները բանվ. ուժեր պատրաստող այլ հիմնարկների (ԿԻՏ-ի կուրսերը, և այլն): Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի նախագահությանը քսան օրվա ընթացքում քննել կոնկրետ պլանը, վորը կապահովի բանվորական ուժով 1931 թվին— նոր գործարանները:

Միութենական կազմակերպությունները պետք է աշխատեն, վոր կանացի աշխատանքն արմատակալի արտադրության մեջ վոչ միայն մասսայական պրոֆեսիաներով, այլ և բարձր վորակի:

14) Ապահովելով մատակարարման սիստեմի վորափոխումը համաձայն ՀԿԿ (բ) Կենտկոմի և ԿՎՀ-ի դեկ-

տեմբերյան պլենումի վորոշման, պրոֆմիությունները որգանական մասնակցություն ունենալով կոոպերատիվային սիստեմի մեջ, միաժամանակ պետք է ամեն կերպ աշխատեն մի շարք ձեռնարկներում մշակելու այնպիսի ձեր, վոր մատակարարեն գերազանցապես, առաջին հերթին պրոֆմիության անդամ— հարվածայիններին դեֆիցիտային մթերքներով և արդյունաբերական ապրանքներով:

Հարվածայիններին պարգևատրելու համար անհրաժեշտ համարել, վոր արդյունաբերական ապրանքների հատուկ ֆոնդ կազմվի: ՀԱՄԿԽ-ի նախագահությանը, Պարենժողկոմին և Ցենտրոսայուզին հանձնարարել այդ ֆոնդի բաշխման կարգը հաստատել:

Հասարակական սննդի վորակի հիմնական բարելավման և նրա հետագա ծավալման աշխատանքը պետք է դառնա միութենական և տնտեսական կազմակերպությունների հիմնական գործը: Պլենումն անհրաժեշտ է համարում, վոր ԽՍՀՄ ժողտնտխորհը սննդի ձեռնարկների հատուկ սարքավորումով և նոր շենքերին կից, ռայոններում, ուր արդյունաբերական ձեռնարկներ կան նպաստի և զարգացնի հասարակական լավորակ սննդի գործը:

15) Անհրաժեշտ լիովին հատկացումն այն միջոցների, վոր վորոշել է ՀԿԿ (բ) Կենտկոմը և Կենտգործկոմի սեփական աշխատանքի պահպանման համար (155 միլ. ռուբ.) և բնակարանային շինարարությունը: Ըստ վորում, պետք է հաշվի առնվեն Ուրալո-Կուզբասի ռայոնի ծավալվող արդյունաբերական և բնակ. շինարարության կարիքները:



Պլենումն առաջարկում է պրոֆկազմակերպություններին ձեռք առնել միջոցներ ոգտագործելու համար այն միջոցները, վորոնք բաց են թողնվում բնակ. շինարարության համար և միջոցառումների դիմեն աշխատանքի պաշտպանությունն առողջացնելու համար, իրենց ուշադրությունը կենտրոնացնելով արդյունաբերության ղեկավար շրջանների վրա (լեռնային, մետալագործական և քիմիական):

Հանձնարարել ՀԱՄԿԽ-ի նախագահությանը— Աշխժողկոմի և ժողտնտխորհի հետ միասին—մոտ ապագայում— (մարտ-ապրիլ) կազմակերպել համամիութենական ստուգատես աշխատանքի պահպանման և արդյունաբերության ու տրանսպորտի վրա տեխնիկական ապահովության:

Պլենումը հանձնարարում է ՀԱՄԿԽ-ի նախագահությանը հաստատել խիստ կոնտրոլ միութենական բոլոր կազմակերպությունների վրա, վորպեսզի հետեվեն այս վորոշումների կիրառմանը:

## Սպառողական կսոպերացիայի մերձճաղաճային տնտեսությունների դրության և զարգացման մասին 1931 թվին

### ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումի վորոշումը

Հնգամյակի յերրորդ, վճռական տարում սոցիալիստական շինարարության գծված պլանների կատարումը սպառկոոպի և պրոֆմիությունների առաջ դնում է մի շարք կարևորագույն խնդիրներ—բարելավել բանվորական մատակարարումը, կոոպերացիայի և պրոֆմիությունների աշխատանքների վերափոխումն այդ բնագավառում, գործնականորեն կապել բանվ.

մատակարարումն արտադրական պլանների կատարման հետ և բարձրացնել ռեալ աշխատավարձը:

Մերձքաղաքային սպառկոոպի տնտեսությունների զարգացումը, վորպես լրացուցիչ ռեսուրսի աղբյուր, խոշոր նշանակություն ունի բանվորական մատակարարման գործում:

ՀԱՄԿԽ-ի պլենումը գտնելով, վոր սպառկոոպը մերձքաղաքային տնտեսությունների զարգացման գործում ունի խոշոր նվաճումներ, այնուամենայնիվ այդ տնտեսություններից մի քանիսի վիճակն աննախանձելի յե. անտնտեսավարությունը տեղ-տեղ հասնում է վնասարարության. բանջարանոցների բերքատվությունը և կովերի կաթնատվությունը ցածր է, անծրագիր և թանգ նստող շինարարություն է յեղել, մեծ քանակությամբ անասուն է կոտորվել, բանջարեղեն է փչացել և այլն:

Պլանային հանձնարարումները կատարված չեն արդյունաբերական հիմնական ռայոններում— Լենինգրադում, Մոսկվայում, Ստալինգրադում, Բաքու. այն դեպքում, յերբ մի քանի ռայոններում պլանը գերակատարված է: Պլանների թերակատարումը զգալի չափով հետևանք է սպառկոոպի անբավարար աշխատանքի և պրոֆմիությունների անուշադիր վերաբերմունքի դեպի մերձքաղաքային տնտեսությունները:

ՀԱՄԿԽ-ի դիրեկտիվները պրոֆկազմակերպություններին— տեղերում, մերձքաղաքային տնտեսությունների զարգացման վերաբերյալ զգալի մասով կատարված չեն:

Ուստի, այս բանից յելնելով՝ պլենումն առաջարկում է.



1) Պրոֆմիություններին— մոբիլիզացիայի յենթարկել բանվորական լայն մասսաներին ոգնելու համար, կոոպերացիային և վճռականորեն վերացնել կազմակերպչական-տնտեսական թերությունները մերձքաղաքային տնտեսությունների մեջ, գործնականում ապահովելով 1931 թվի պլանի լրիվին կատարումը — 300·000 հեկտ. հատկացնելով բանջարանոցին, 300·000 ջերմոցային շրջանակ— ժամանակին թարմ բանջարեղեն բաց թողնելու համար, այգիներին և պտղատու ծառերին— յերկու հազար հեկտար ունենալ կաթնատու անասունների կեր վոչ պակաս քան 185·000 գլխի, խոզի կեր—1·200·000 գլխի, մերուն—130·000, մարի — 370·000, ճագար-մայր— 105·000 գլուխ:

1931 թվի կաթնա-բանջարային շինարարության ծրագիրն իրագործելու համար սպառկոոպը պետք է կազմակերպի իր սեփական կերի բազան 306·000 հեկտ. հրապարակով, նկատի առնելով, վոր հիմնականում ապահովի անասնաբուծական կոլխոզների կարիքը կոշտ և հյութալից կերով, միաժամանակ միջոցներ ձեռք առնելով մաքսիմալ կերպով ոգտագործելու համար քաղաքի և արդյունաբերական կեր տվող ավելցուկները:

2) Սպառկոոպի մերձքաղաքային տնտեսությունները պետք է հիմնվեն անմիջապես կից այն ֆաբրիկներին, գործարաններին և նոր շինություններին, վորոնց նրանք սպասարկում են:

Այդ տնտեսությունների զարգացումը գնալու յե մաքսիմալ ապակենտրոնացման գծով և տեղական կազմակերպություններին, առաջին հերթին խոշոր ֆաբրիկաներին և գործարաններին տրվելու նախաձեռնու-

թյուն։ Պրոֆմիությունները պետք է ձգտեն, վոր տեղական քաղաքի և մերձ—գյուղի խորհուրդներն իրենք կազմակերպեն մերձքաղաքային կաթնա—բանջարանոցային ու խոզի կեր պատրաստող տնտեսություններ։ Առաջարկվում է սպառկոոպին և պրոֆխորհուրդներին, վոր կազմակերպեն փակ բան. կոոպերացիային կից, նրա ուժերին համապատասխան հրապարակ, վորպեսզի հիմնի բանջարանոցներ և խոզ կերակրելու կետեր, և այնտեղ, ուր հնարավոր է — կաթնային ֆերմա, վորպեսզի այդ գործը վոչ միայն բավարարի 1931 թվի ծրագիրը, այլ և մաքսիմալ կերպով օգտագործելով գործարանների ներքին հնարավորությունները, ապահովի ծրագրի գերակատարումը։

Մնացած մյուս բոլոր տնտեսությունները վոչ ուշ քան փետրվարի 15-ը պետք է կցվեն արդյունաբերական ձեռնարկներին, նպատակով, վոր կցված տնտեսությունների արտադրանքն իր հիմքում բավարարի այդ ձեռնարկների պահանջները։

3) Արդյունաբերական ձեռնարկների ֆաբգործկոմները, վորոնց կցված են մերձ—քաղաքային տնտեսությունները պետք է լայն կերպով քննեն բանվորների հետ միասին, 1931 թվի մերձ—քաղաքային տնտեսությունների զարգացման պլանները, և կոոպերացիայի հետ միասին կազմակերպեն բրիգադներ— սերմը մթերելու, ինվենտարը նորոգելու, քաշող ուժը մոբիլիզացիայի յենթարկելու և բան. ուժը կազմակերպելու համար։

4) Պարտավորեցնել ֆաբգործկոմներին, գործնականում կիրառել մասսայական բանվորական կոնտրոլը— յուրաքանչյուր մերձ—քաղաքային տնտեսության



վրա, վորպեսզի վճռական միջոցներ ձեռք առնեն անասունները խնամելու գործը լավ հիմքերի վրա դնելու համար, կաթնատու անասունների կթի քանակը բարձրացնելու համար, բանջարանոցները լավ պահելու համար, արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու և շինարարությունն եժանացնելու համար։

5) Պրոֆխորհուրդներին և ֆաբգործկոմներին— մի ամսվա ընթացքում ստուգել մերձ—քաղաքային տնտեսությունների աշխատավորների անձնակազմը, մաքրելով այն— խորթ և վնասարար ելեմենտներից։

Ֆաբգործկոմները պետք է լավագույն բանվորհարվածայիններից առանձնացնեն մերձ—քաղաքային տնտեսությունների համար դիրեկտորներ և նրանց օգնականներ։ Հավանություն տալով ՀԱՄԿԽ-ի նախագահության վորոշմանը— յերկու հարյուր հոգի պատասխանատու աշխատավորներ ուղարկելու համար մերձ—քաղաքային տնտեսություններում աշխատելու, վորպես ղեկավարներ, հանձնարարել նրան այդ աշխատանքը վերջացնել մի ամսվա ընթացքում.

6) Գյուղատնտեսական բանվորների միությանը և պրոֆխորհուրդներին—ամրացնել կոլխոզներում բանկոմխմբերը, ծավալել բանվորների մեջ մասսայական դաստիարակչական աշխատանքը, կազմակերպել արտադրական խորհրդակցություններ, ժողովել ռացիոնալացման վերաբերյալ առաջարկությունները։ Միջոցներ ձեռք առնել ամրացնելու աշխատանքի դիսցիպլինան և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, փոխանցելով ամբողջ աշխատանքի վարձատրությունը— կտորով սիստեմի, վորը կենթարկվի նորմիրովկայի։ Ծավալել բանվորների մեջ սոցմրցակցու-

թյունը և հարվածայնությունը, գործադրելով պարգևատրման սիստեմը պլանի կատարման լավ ցուցանիշների համար։

7) Մեքենագործների, երկաթուղայինների, ջրայինների, տեղական տրանսպորտի և կառուցողների միությունները պարտավոր են ժամանակին կատարելու գործարանների տված պատվերները գյուղատնտեսական մեքենաները պատրաստելու վերաբերյալ— մերձ-քաղաքային տնտեսությունների համար, պարտավոր են ժամանակին սերմը, անասունը և այլն— տեղ հասցնել, եժանացնել կառուցումները և օգտագործել տեղական շինանյութերը։

8) Անգործունեությունը և թափթփվածությունը, վոր հանդես են բերում սպառկոոպի օրգանները, վոչ բավարար ուշադրությունը պրոֆմիությունների կողմից գարնանացանի կամպանիային, առանձնապես սերմերով չապահովելը, սպառկոոպին և պրոֆմիություններին տեղերում— առաջարկվում է ամենավճռական և շտապ միջոցներ ձեռք առնել պատրաստելու բանջարանոցային սերմեր, այդ նպատակի համար օգտագործելով գյուղական կոոպերատիվների ամբողջ սիստեմը․ արդյունաբերական ապրանքների հատուկ ֆոնդ ստեղծել խրախուսելու համար մթերքները կոլխոզներում և անհատական տնտեսություններում։

Մեխանիկական քարշող ուժի պակասության հետեվանքով, սպառկոոպը և պրոֆմիությունները պետք է ամենավճռական միջոցներ ձեռք առնեն ունեցած մեխանիկական քարշող և կենդանի ուժը մաքսիմում կերպով օգտագործելու։ Ամեն կերպ ուժեղացնել կենդանի քարշող ուժի հավաքման գործը (ձի, յեզ) մինչև ցանքսի սկիզբը։ Տնտեսական օրգանների, քաղ. և գյուղխորհուրդների հետ միասին մշակել գործնական միջոցներ — ցանքսի ժամանակ օգտագործելու համար քաղաքի և արդյունաբերական ձեռնարկների որոշը․ աշխատել, վոր մեքենա-տրակտորային կայանները և սովխոզներն օգնեն մերձ-քաղաքային տնտեսությունների հողը հերկելուն։

9) Պրոֆմիությունները և կոոպերացիան հատուկ ուշադրություն են դարձնելու տնտեսությունների բանվորական ուժի կոմպլեկտացման վրա։

Անհրաժեշտ է անմիջապես վորոշել յուրաքանչյուր ձեռնարկի բան. ուժի կարիքը, հաշվի առնել այն և ուժեղ աշխատանք տանել կոնտրակտացիայի համար։ Աշխժողկոմի օրգանների միջոցով կազմակերպել բանվորների տեղափոխում այն ռայոնները, ուր բան. ուժի պակաս է զգացվում։ Գործնական միջոցառումներ մշակել արդյունաբերական բանվորներին մերձ-քաղաքային տնտեսությունը ներգրավելու համար այն հաշվով, վոր աշխատանքների մի մասն ընկնի այդ բանվորների վրա, ի հաշիվ նրանց ընտանիքների։

10) Նշել, վոր հողօրգանները տեղերում չեն կատարել դիրեկտիվներն այն մասին, վոր կոոպերացիային անհրաժեշտ քանակությամբ հող հատկացվի բանջարանոցների համար, ի հաշիվ 300 հազար հեկտարի։ Պնդել, վոր Հողժողկոմն այդ աշխատանքը վերջացնի մեկ ամսվա ընթացքում, հատկացնելով նմանապես վորոշ քանակությամբ սերմեր։

Աջակցել Ցենտրոսայուզի միջնորդությանը կառավարության առաջ, վորպեսզի առ մեկն փետրվարի 1931 թ. հատկացնի 500 տրակտոր, վորից վոչ պակաս

քան տոկոսը և անհրաժեշտ սարքավորումը հանձնել քառասուն վերանորոգող արհեստանոցի։

Ցենտրոսայուզին աջակցել, վոր կարողանա մոբիլիզացիայի յենթարկի, վոչ ուշ քան 15-ն փետրվարի, մերձ-քաղաքային տնտեսությունների համար— հարյուր գյուղատնտես, 150 բնագ. տեխնիկ, 150 անասնաբույծ և 150 անասնաբուժակ։ Կոլխոզները մտցնել հանքային պարարտանյութերի մատակարարման պլանի մեջ։

Մերձ-քաղաքային բոլոր տնտեսությունների ղեկավարությունն ուժեղացնելու, զարգացնելու և 1931 թվի պլանը լրիվին կատարելու նպատակով, առաջարկել Ցենտրոսայուզին ունենալ խոշոր կազմակերպչական պարզություն և ղեկավարություն մերձ-քաղաքային տնտեսությունների վրա։

11) Անհրաժեշտ համարել, վոր ԽՍՀՄ Պարենժողկոմն անհրաժեշտ, ռեալ ոգնությունը ցույց տա մերձ-քաղաքային տնտեսություններին և սպառկոոպին— տալով կոշտ կեր և կոլխոզները հավասար դարձնի պետսովխոզներին հոտի կոմպլեկտացման տեսակետից։

12) Միութենական և կոոպերատիվային կազմակերպությունները պետք է իր ժամանակին կատարեն իրենց վրա վերցրած պարտականություններն ուժեղացնելու մերձ-քաղաքային տնտեսությունները, ծավալեն միջոցների մոբիլիզացիան աշխատավոր ազգաբնակության, ձգտեն, վոր Ֆաբրիկաները, գործարանները և տեղական քաղ. և գյուղխորհուրդները միջոցներ հատկացնեն։



Պրոֆխորհուրդները— հետևելու յեն, վոր տնտեսությունները ժամանակին միջոցներ ստանան կոոպերացիայից և այլ կազմակերպություններից։

Պլենումը վորոշում է. 1931 թվին մերձ-քաղաքային տնտեսությունների զարգացման համար վարկ տալ քառասուն միլիոն ռուբլի միության միջոցներից, իսկ 1930 թվին կոոպերացիային բաց թողած 18.500.000 ռուբլին վերադարձնելը յետաձգել մինչև 1932 թիվը։

ՀԱՄԿԽ-ի պլենումն ամենասուր և վճռական կերպով ընդգծում է, վոր պրոֆմիությունների գործնական աշխատանքի կենտրոնական տեղը— մերձ-քաղաքային տնտեսությունների խնդրում լինելու յե այն, վոր ամեն կերպ աջակցեն կոոպերացիային յուրացնելու համար 300 հազար հեկտար հող, ժամանակին ցանեն, հնձեն ու հավաքեն, կատարեն անասնաբուծության պլանը, ստուգեն փաստորեն կատարած գործը և յուրաքանչյուր աշխատակցի անձնական պատասխանատվության հարցն իր տարած աշխատանքի համար։

Այս խնդիրները կատարելու համար, պրոֆմիությունները պետք է մոբիլիզացիայի յենթարկեն բանվորական լայն մասսաները և ապահովեն նշված պլանների իսկական կատարումը։

---

## Պրոֆմիությունների ֆինանսների և պրոֆբյուջեի կոնտրոլային թվերի մասին 1931 թվականին ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումի վորոշումը

*Պրոֆշարժման հերթական խնդիրները—ռեկոնստրուկտիվ ժամանակաշրջանում—հրամայաբար պահանջում են պրոֆմիությունների ամբողջ ֆինանսական քաղաքականության և գործնականի հիմնական վերափոխում: Պրոֆշարժման հիմնական խնդիրները կատարելու համար, նրան պիտի յենթարկել ամբողջ ֆինանսական աշխատանքը—մի բնագավառ, վորը մինչև այժմ պրոֆմիությունների ամենայետամնաց մասն է կազմում: Ոպորտունիստական ղեկավարությունը, մասնավորապես ֆինանսական բնագավառում արմատացրել է տրեդ-յունիոնիստական ցեխային նախապաշարմունքները, ապոլիտիկությունը, վորն իր վառ արտահայտությունն է գտել ինքնահոսի, ֆինանսական աշխատանքի անհարթության, ապարատի փքվածության, կադրերի պատրաստման գործի լիակատար թերագնահատման, քաղկրթական աշխատանքների մեջ, և այլն:*

*ՀԱՄԿԽ-ի պլենումը նշելով վերջին ժամանակաշրջանում ունեցած զգալի աջողությունները—ոպորտունիստական մնացորդներն արմատախիլ անելու գործում, գտնում է, վոր պրոֆմիություն. ֆինանսական աշխատանքների մեջ մինչև այժմ ել կան խոշոր թերություններ:*

*Այս թերություններն են. ոպերատիվ ղեկավարությունը և կոնտրոլը—միութենական ֆինանսների նկատմամբ, վերադաս կազմակերպությունների կողմից սիս-*



*տեմատիկ խախտումները նախահաշիվների և, երբ կանոն, վոչ ժամանակին և վատ մշակումը նրանց, անհրաժեշտ նպատակաձգման և միությունների ֆինանսական պլանացման բացակայությունը, միանգամայն վոչ բավականաչափ ներգրավումը միության անդամների ֆինանսական-նախահաշվային գործում և մասսայական հաշվետվության թուլությունը—միության անդամների առաջ—ձեռնարկներում:*

*Այս ամենը պահանջում է, վոր բոլոր պրոֆկազմակերպությունները վճռականորեն և սիստեմատիկ կերպով պայքարեն այդ թերությունների դեմ և արմատախիլ անեն ցեխականության ելեմենտները, վարչական փակվածությունը, կուստարշչինան պրոֆմիությունների ֆինանսական աշխատանքում:*

*ՀԱՄԿԽ-ի պլենումը հավանություն տալով պրեզիդիումի միջոցառումներին—պրոֆմիությունների ֆինանսական քաղաքականությունը փոփոխության յենթարկելու գործում, վորոշում է.*

*1. Պրոֆմիությունների միջոցներին ուղղություն տալու նպատակով, վոր համապատասխան լինի ռեկոնստրուկտիվ ժամանակաշրջանի խնդիրներին և ֆինանսների միասնական ղեկավարությունը ապահովելու համար—ստեղծել ԽՍՀՄ պրոֆշարժման միասնական պրոֆշարժման բյուջե:*

*2. Հաստատել ԽՍՀՄ պրոֆբյուջեյի կոնտրոլային թվերը—նրանց հիմնական ցուցանիշներով. ավելացնել յեկամտային մասը—405 միլիոն ռուբլուց 1929 թվին, մինչև 600 միլիոն ռուբլու 1931 թվին: Ցելքի մասում—իջեցնել ադմինիստրատիվ-տնտեսական ծախսերը 32 տոկոսից—1929 թվին—մինչև 18 տոկոսի. ավելացնել ծախսերը—կադրեր պատրաստելու համար վեց միլիոն ռուբլուց 1929 թվին, մինչև 78 միլիոն ռուբլու 1931 թվին. ավելացնել ծախսերը միության անդամների կուլտուր-կենցաղային սպասարկման համար 171 միլիոն ռուբլուց 1929 թվին, մինչև 254 միլիոն ռուբլու 1931 թվին. ավելացնել վարկավորումը մերձքաղաքա-*

յին կոոպերատիվ տնտեսությունների շինարարության—15 միլիոն ռուբլուց 1929 թվին, հասցնելով 40 միլիոն ռուբլու 1931 թվին և առանձնացնել 75 միլիոն ռ. նպաստ տալու համար միութենական փոխադարձ օգնության դրամարկղներին—խոշոր և միջակ ձեռնարկներում—ծանր ինդուստրիայի և յերկաթուղային տրանսպորտում:

3. Փոխել գոյություն ունեցող հատկացումների կարգը ռայոնական, մարզային (յերկրային և հանրապետական) միջմիութենական և միութենական կազմակերպություններին, հաստատելով այդ կազմակերպությունների ֆինանսավորելու հետևյալ կարգը.

ա) Բոլոր միութենական և միջմիութենական կազմակերպությունները անցկացնել ամուր նախահաշվի—հաստատված վերադաս մարմինների կողմից:

բ) Մարզային, յերկրային և հանրապետական պրոֆխորհուրդները դրամավորվում են ՀԱՄԿԽ-ի կողմից, մարզային, յերկրային և հանրապետական բաժանմունքները—դրամավորվում են միությունների կենտկոմների կողմից:

գ) Ֆաբրգործտեղկոմների կողմից գանձվող անդամավճարները մտնում են բացառապես տվյալ միության կենտկոմի ընթացիկ հաշվի մեջ:

դ) Ֆաբրգործտեղկոմները պահվում են և իրենց աշխատանքները վարում ըստ նախահաշիվների—հաստատված միութենական վերադաս մարմինների կողմից, այն միջոցներով, վոր տրվում են համաձայն կոլպայմանագրերի:

4. Համաձայն այս բանի—ստեղծել կենտրոնացված բյուջե միության կենտկոմի, անդամավճարների միասնական դրամարկղով—յուրաքանչյուր միության սահմաններում:

Բոլոր միջմիութենական կազմակերպությունների աշխատանքների և պահպանման համար հաստատել, վոր միությունների կենտկոմները հատկացնեն ՀԱՄԿԽ-ին միջին թվով 18 տոկոս, այդ հատկացումների չափը



դիֆերենցացիայի յենթարկելով ըստ առանձին միությունների:

5. Հաստատելով ՀԱՄԿԽ-ի պրեզիդիումի վորոշումը (1930 թ. դեկտ. 28), վոր անդամավճարների յերկու տոկոսը մնա նույնը, պրոֆմիությունների միջոցառումներն ապահովելու համար մասսաների կուլտուր-քաղաքական մակարդակը բարձրացնելու և սոցիալ-կենցաղային գործը բարելավելու բնագավառում, հանձնություն տալ անդամավճարների կես տոկոսի կենտրոնացումը ՀԱՄԿԽ-ին կից, գործադրելով այդ միջոցառումները հետևյալ կերպ. յերեսուն միլիոն նպաստ հատկացնել ծանր ինդուստրիայի ձեռնարկների և տրանսպորտի փոխադարձ օգնության դրամարկղներին, 15 միլիոն հատկացնել ակումբների շինարարությանը ծանր ինդուստրիայի կարևորագույն ռայոններում և այլ կենտրոնացված ձեռնարկներում:

6. Բանվոր պրոֆմիության անդամների նյութական, կուլտուրական և կենցաղային պետքերը բարելավելու և սպասարկելու համար (մերձքաղաքային տնտեսությունների վարկավորումը, կադրերի պատրաստումը, միության փոխադարձ օգնության դրամարկղների մուծումները) անհրաժեշտ համարել, վոր դրանց համար անդամավճարներից ծախսելուց զատ, հատկացնել նաև ֆաբրգործտեղկոմների կոլպայմանագրերի միջոցներից վոչ ավելի քան մեկ յերրորդ մասը:

7. Միութենական նշանակություն ունեցող միջոցառումներն ապահովելու համար, ծախսելու հետևյալ կարգը հաստատել.

ա) Կադրեր պատրաստելու համար միջոցները կենտրոնացվում են միությունների կենտկոմներին կից և օգտագործվում են ՀԱՄԿԽ-ի ցուցմունքներով, համաձայն կադրերի պատրաստման միասնական պլանի:

բ) Ֆաբրգործտեղկոմների միջոցներից կենտրոնացման յենթարկել վսեոբուչի և լիկկայանների համար ռայոնի սահմաններում: Այդ կենտրոնացված միջոցներից ապահովել հատկացումները այդ նպատակով նաև ազգային ռայոնները:

դ) Մերձքաղաքային տնտեսություններին տվելիք վարկային միջոցները կենտրոնացնել միությունների կենտկոմներին կից և նրանց օգտագործել համաձայն ՀԱՄԿՄ–ի կողմից հաստատված պլանի:

8. Նախահաշվային ամուր բյուջետային դիսցիպլինա ստեղծելու նպատակով և պրոֆբյուջեյի յելքի մասի կոնտրոլային թվերի կատարումն ապահովելու նպատակով՝ պլենումն անհրաժեշտ է գտնում.

ա) Հիմնել կվարտալային հաշվետվություն բոլոր պրոֆկազմակերպությունների համար:

բ) Արգելել միջմիութենական և միութենական կազմակերպություններին վորևէ ծախս կամ բաշխում կատարելու, վոր նախատեսված չե նախահաշվով:

գ) Միության օրգանների միջոցների, վորոնց թըվում և փաբգործտեղկոմների, հանձնումը տարբեր կազմակերպությունների (տեխմաս, ՈՍՈ–Ավիաքիմ, ՈՊՏԵ և այլն) թույլատրվում է միայն այն պայմանով, յեթե այդ բանը նախատեսված է նախահաշվով և յեթե այդ միջոցները պահանջող կազմակերպությունները իրենց աշխատանքները կատարում են անմիջապես տըվյալ ձեռնարկի բանվորների և նրանց ընտանիքի անդամների մեջ:

դ) Բոլոր միությունների մեջ մտցնել անդամավճարների գանձման մարկային սիստեմ:

ե) Ամրացնել ֆինսեկտորները և նրանց ապարատը հարմարեցնել կատարելու համար ֆինանսական աշխատանքների խնդիրների վերակառուցումը:

զ) Կազմակերպել ֆինանսական աշխատավորների կադրերի պատրաստումը և վերապատրաստումը:

է) ՀԱՄԿՄ–ի պրեզիդիումին հանձնարարել մշակելու մի շարք միջոցառումներ, ուղղված անդամավճարների գանձման հրահրմանը, վորպեսզի միության անդամները ժամանակին մտցնեն իրենց անդամավճարները և [illegible] մտցնեն տոկոսները իրենց աշխատավարձի [illegible] գումարից:

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԽՍՀ – ССР
им. А. Мясникяна
ՀՀ Ազգային գրադարան
NL0196914

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.